



## Որակի ապահովման

### ձեռնարկ

(բուհի կրթության որակի ապահովման և այդ գործընթացներին ուսանողների ներգրավման ուսումնասիրողական ձեռնարկ)

ՀՏԴ 378(07)  
ԳՄԴ 74.58Գ7  
Ո 613

Ձեռնարկը տպագրվել է Ճարտարապետության և  
շինարարության Հայաստանի ազգային համալսարանի  
(ՃՀՀԱՀ) գիտական խորհրդի որոշմամբ:

Վարազդատ Հովհաննիսյան, ՃՀՀԱՀ կրթության որակի ապահովման կենտրոնի ղեկավար, տեխնիկական գիտ.  
թեկնածու, դոցենտ  
Իրինա Վանյան, ՃՀՀԱՀ կրթության որակի ապահովման կենտրոնի գլխավոր մասնագետ, տնտեսագիտության  
թեկնածու, դոցենտ  
Լևոն Լևոնյան, ՃՀՀԱՀ-ի գիտական քարտուղար, տեխնիկական գիտ. թեկնածու, դոցենտ  
Անգին Մարտիրոսյան, ՃՀՀԱՀ կրթական ծրագրերի և ուսումնամեթոդական վարչության պետ, տեխնիկական  
գիտ. թեկնածու, դոցենտ  
Հովսեփ Հովեյան, ՃՀՀԱՀ ուսանողական խորհրդի նախագահ  
Անի Հակոբյան, ՃՀՀԱՀ կրթության որակի ապահովման կենտրոնի մասնագետ  
Պատասխանատու խմբագիր՝ Լ. Միրզոյան, մ.գ.թ., պրոֆեսոր

Որակի ապահովման ձեռնարկ (բուհի կրթության որակի ապահովման և դրա գործընթացներում  
ուսանողների ներգրավման ուսումնամեթոդական ձեռնարկ).- Եր.: ՃՀՀԱՀ, 2017թ. - 79 էջ:



Co-funded by the  
Tempus Programme  
of the European Union



Enhancing Students  
Participation in Quality  
Assurance in Armenian HE

Project Name: Enhancing Students Participation in Quality Assurance in Armenia HE - ESPAQ

This publication reflects the views only of the authors, and the Commission cannot be held responsible for any use which may be made of the information contained therein.

Այս հրատարակությունն արտացոլում է միայն հեղինակների տեսակետները և Եվրոպական հանձնաժողովը պատասխանատվություն չի կրում դրանում պարունակվող տեղեկատվության և դրա օգտագործման համար:

This Guide has been published within the framework of “Enhancing Students Participation in Quality Assurance in Armenian Higher Education” (ESPAQ) Tempus project No. 544261-TEMPUS-1-2013-1-BE-TEMPUS-SMGR.

Սույն ձեռնարկը տպագրվել է «Ուսանողների մասնակցության ընդլայնումը Հայաստանի բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացում (ESPAQ)» Տեմպուս թիվ 544261-TEMPUS-1-2013-1-BE-TEMPUS-SMGR ծրագրի շրջանակներում:

Ուսումնամեթոդական ձեռնարկում ներկայացված են կրթության որակի ապահովման և այդ գործընթացներում ուսանողների ներգրավման մեթոդաբանության ընդհանուր դրույթներ, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի որակի ներքին ապահովման հայեցակարգը, քաղաքականությունը, ընթացակարգերը և որակի ներքին ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավումն ապահովող հետադարձ կապի մեխանիզմները: Ձեռնարկը նախատեսված է ՃՀՀԱՀ վարչական, ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի, ուսանողների, ասպիրանտների, ինչպես նաև որակի ապահովման համակարգի հետազոտողների համար:

The general methodological provisions of education quality assurance and students engagement in the processes of quality assurance, as well as the concept, policy, procedures of internal quality assurance and feedback mechanisms of students' engagement in internal quality assurance processes of the National University of Architecture and Construction of Armenia (NUACA) are presented in the Educational-methodological Guide. The Guide is intended for managers and employees of the administrative and educational departments, faculty and educational-supportive staff, students, post-graduates students (aspirants), as well as for the researchers of quality assurance system.

В учебно-методическом руководстве представлены общие положения по обеспечению качества образования и вовлечения студентов в процессы обеспечения качества образования, а также концепция, политика и процедуры по внутреннему обеспечению качества образования Национального университета архитектуры и строительства Армении (НУАКА). Руководство предназначено для руководителей и сотрудников административных и учебных подразделений, профессорско-преподавательского и учебно-вспомогательного состава, студентов, аспирантов, а также специалистов, изучающих систему обеспечения качества.

ՀՏԴ 378(07)  
ԳՄԴ 74.58Գ7

ISBN 978-9939-63-292-6

© ՃՀՀԱՀ, 2017

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՆԱԽԱԲԱՆ.....	6
ԳԼՈՒԽ 1. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ.....	11
1.1 Որակի սահմանումը.....	11
1.2 Որակի ապահովման համակարգը .....	12
1.3 Բարձրագույն կրթության որակի ապահովման չափորոշիչները և ուղենիշները .....	13
1.4 Որակի ապահովման Եվրոպական չափորոշիչները և ուղենիշները .....	14
1.5 Որակի ներքին (բուհական) ապահովման չափորոշիչները և ուղենիշները .....	17
1.6 Որակի արտաքին արտաքին ապահովումը.....	26
ԳԼՈՒԽ 2. ՃՇՀԱՀ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	34
2.1 ՃՇՀԱՀ որակի ներքին ապահովման համակարգի ընդհանուր նկարագրությունը և կազմակերպական կառուցվածքը .....	37
2.2 ՃՇՀԱՀ որակի ներքին ապահովման համակարգի ելակետային սկզբունքները, նպատակներն ու խնդիրները.....	44
2.3 ՃՇՀԱՀ-ի որակի ապահովման հիմնական գործընթացները .....	44
2.4 ՃՇՀԱՀ որակի ներքին ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավման սկզբունքները .....	47
2.5 ՃՇՀԱՀ որակի ապահովման համակարգի փաստաթղթավորումը.....	58

ԳԼՈՒԽ 3. ՃՇՀԱՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ .....	60
3.1 ՃՇՀԱՀ որակի ներքին ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը .....	60
3.2 Ուսումնառության գնահատումը .....	64
3.2.1 Գնահատման համակարգի սկզբունքները .....	72
3.2.2 Գնահատման բազմաբաղադրիչային համակարգը .....	75
3.2.4 Ուսումնառության արդյունքների գնահատման ընթացակարգերը .....	75
3.2.4 Դասավանդման սկզբունքները և ընթացակարգերը .....	81
3.3 Պրոֆեսորադասախոսական կազմի հավաքագրումը, ընտրությունը և մասնագիտական զարգացումը .....	82
3.3.1 ՃՇՀԱՀ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման քաղաքականությունը .....	82
3.3.2 Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման ընթացակարգը .....	86
3.3.3 ՃՇՀԱՀ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացման քաղաքականությունը .....	93
 ԳԼՈՒԽ 4. ՃՇՀԱՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ .....	98
4.1 ՃՇՀԱՀ հետադարձ կապի քաղաքականությունը ....	98
4.2 ՃՇՀԱՀ-ում գործող հետադարձ կապի մեխանիզմները .....	102

4.3 Հետադարձ կապի ստացումը և օգտագործումը ....	106
4.4 Հասարակական պատասխանատվությունը, հրապարակայնությունը և հաշվետվողականությունը՝ որպես որակի ապահովման համակարգի անբաժանելի մաս .....	107
Հավելված 1. Դասալսումների անցկացման ընթացակարգը .....	127
Հավելված 2. Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման կարիքների վերհանման հարցաթերթ .....	131
Հավելված 3. ԲՈՒՀ նոր ընդունված ուսանողների հարցման հարցաթերթ.....	133
Հավելված 4. Ուսանողների դասընթացներից բավարարվածության վերաբերյալ հարցաթերթ.....	135
Հավելված 5. Ուսումնական գործընթացից ասպիրանտների բավարարվածության հարցաթերթ.....	138
Հավելված 6. ԲՈՒՀ-ն ավարտողների (շրջանավարտների) հարցման հարցաթերթ.....	141

## ՆԱԽԱԲԱՆ

1999 թվականին Եվրոպական 29 երկրների կրթության նախարարները հանդիպեցին Բոլոնիայում և ստորագրեցին մի հռչակագիր, որի նպատակն էր մինչև 2010 թվականը ստեղծել Եվրոպական Բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) և նպաստել եվրոպական բարձրագույն կրթության գրավչությանն ու մրցունակությանը ողջ աշխարհում:

Հայաստանի Հանրապետությունը 2005 թվականի մայիսի 19-ին ընդունած հռչակագրի համաձայն, նախկին կրթական համակարգից անցում կատարեց Բոլոնյան համակարգին: Բոլոնյան գործընթացին այսօր արդեն անդամակցում է շուրջ 49 երկիր:

Բոլոնիայի Հռչակագիրը Եվրոպայի բարձրագույն կրթության հաստատությունների համար սահմանում է մի շարք հիմնարար սկզբունքներ, որոնցից կարևորագույններն են՝ թափանցիկությունը և համադրելիությունը, ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի շարժունությունը: Հռչակագիրը կարևորում է Կրթության որակի ապահովման գործընթացում Եվրոպական չափանիշների և ուղեցույցների հաստատումը:

Հայաստանում «կրթության որակ» հասկացության և որակի հավաստման նոր համակարգի ձևավորման քննարկումները 2000 թվականից սկսվել են Եվրախորհրդի «Որակի հավաստման իրավական շրջանակը Հարավային

Կովկասի երկրներում. Հայաստան, Վրաստան և Ադրբեջան» ծրագրից: Նշված ծրագրի շրջանակում մշակված ազգային զեկույցներում և 3 երկրների կրթության նախարարների համատեղ հռչակագրերում շեշտվում էր որակի հավաստման նոր համակարգի ձևավորման անհրաժեշտությունը, բուհերի կառավարման ժողովրդավարացումը (ժողովրդավարական սկզբունքների ներդրումը), ակադեմիական ազատությունները և ուսանողների մասնակցությունը որակի հավաստման գործընթացներին:

Վերջին տասնամյակում ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը մեծ առաջընթաց է գրանցել՝ ձգտելով միջազգայնացնել իր կողմից դասավանդվող կրթական ծրագրերը: ՃՇՀԱՀ-ը, բարձրացնելով միջազգային գրավչությունը, վճռականորեն ներգրավվել է Բոլոնիայի գործընթացում և ձգտում է հետ չմնալ եվրոպական նմանատիպ համալսարաններից ինչպես կազմակերպման, այնպես էլ որակի չափանիշների առումով: ՃՇՀԱՀ-ը խորը ձևափոխումների փուլում գտնվող համալսարան է, որը նոր ուղի է բացում Հայաստանի մյուս համալսարանների համար: Այս նախաձեռնության մեջ ՃՇՀԱՀ հաջողությունը կարող է զգալի ազդեցություն ունենալ Հայաստանում բարձրագույն կրթության համակարգի զարգացման վրա: ՃՇՀԱՀ ճարտարապետի որակավորման դիպլոմը ճանաչվել է Ֆրանսիայի կառավարության կողմից և համարժեք է ընդունվում Եվրահամայնքի երկրներում:

Ֆրանսիայի Հետազոտությունների և բարձրագույն կրթության գնահատման գործակալության (AERES) կողմից իրականացված գնահատման արդյունքում ՃՇՀԱՀ-ն 2015 թվականի սեպտեմբերին Իսպանիայի Որակի գնահատման և հավատարմագրման ազգային գործակալության (ANECA) կողմից, առաջինը հանրապետությունում, ստացավ միջազգային ինստիտուցիոնալ հավատարմագրման արտոնագիր (Վկայական թիվ AIA 0109/2015):

ՃՇՀԱՀ-ի կայուն զարգացումն ապահովելու նախապայմաններից է 2015-2020թթ. ռազմավարական ծրագիրը, որում, մասնավորապես, ձևակերպված է ՃՇՀԱՀ առաքելությունը:

ՃՇՀԱՀ առաքելության ձևակերպման համար հաշվի են առնվել ներքին և արտաքին միջավայրի գործոնների ազդեցությունները, մասնավորապես կրթության միջազգային զարգացումները՝ այդ թվում Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղությունները: ՃՇՀԱՀ-ը գիտակցում է նաև իր հասարակական պատասխանատվությունը և կարևորում շահակիցների հետ համագործակցության ընդլայնումը:

### **ՃՇՀԱՀ առաքելությունն է.**

Ճարտարապետության, շինարարության, քաղաքային տնտեսության, դիզայնի, տեղեկատվական համակարգերի և հարակից ոլորտներում միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին բավարարող



եռաստիճան կրթական համակարգով մասնագիտական կադրերի պատրաստումը, շարունակական կրթության ապահովումը, գիտահետազոտական աշխատանքների իրականացումը և ծառայությունների մատուցումը:

ՃՇՀԱՀ-ն իր առաքելությունն իրականացնում է Ռեզոլուցիայի ծրագրի նպատակների համաձայն, որոնք ներառում են համալսարանի ողջ գործունեության արդյունավետ իրականացումը բոլոր բնագավառներում՝ ապահովելով համալսարանի կայուն առաջընթացը:

ՃՇՀԱՀ կրթական քաղաքականությունը կոչված է համալսարանին աջակցելու իր առաքելությունն ու ռեզոլուցիայի նպատակներն արդյունավետ կերպով իրականացնելու և կրթության որակն ապահովելու գործում: Կրթության ոլորտի զարգացումները, շահակիցների ներգրավվածության աճը և նրանց պահանջների փոփոխությունները բուհի առջև խնդիր են դնում հիմնարար քաղաքականության և ընթացակարգերի մշակման, որոնց իրականացումը կարող է էականորեն բարձրացնել տրամադրվող կրթական ծառայությունների որակը և արդյունքում ամրապնդել բուհի մրցակցային դիրքերը:

Կարևորագույն ուղղություն է ՃՇՀԱՀ կառավարման արդյունավետության բարձրացումը: Այս առումով, բուհի կառավարման համակարգի կատարելագործման կարևորագույն և անհրաժեշտ ուղղություններից մեկը հետադարձ կապի արդյունավետ կառուցակարգերի

մշակումն է և դրանց իրագործման միջոցների հստակեցումը: Հետադարձ կապը սահմանում է բոլոր շահակիցների և ներգրավված կողմերի փոխազդեցության կառուցակարգը՝ միավորելով բուհի աշխատակիցներին, ուսանողներին, պետական կառավարման մարմիններին, աշխատաշուկան և, ընդհանուր առմամբ, հասարակությանը: Այդպիսի հետադարձ կապի իրականացման կազմակերպումը հանգեցնում է բուհի տարբեր օղակներում կառավարման մարմինների տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը և, հետևաբար, ընդունվող կառավարչական որոշումների հիմնավորվածության բարձրացմանը: Արդյունքում, հետադարձ կապի շնորհիվ ստացված տեղեկատվությունն օգտագործվում է նաև բուհի քաղաքականության և ընթացակարգերի հետագա հստակեցման, ինչպես նաև ռազմավա-րական և գործառնական պլանավորման արդյունավետ կազմակերպման նպատակով:

ՃՇՀԱՀ-ի որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերն ուղղված են կրթության գերխնդրին՝ կրթության որակի բարձրացմանը, օժանդակելով բուհի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանն ու վարչարարության նվազեցմանը, մրցունակության զարգացմանը և ուսանողակենտրոն ուսումնառության ներդրմանն ու բարելավմանը:

# ԳԼՈՒԽ 1. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

## 1.1 Որակի սահմանումը

Գործնականում հասարակության տարբեր խմբեր (դասախոսներ, կառավարիչներ, ուսանողներ, ծնողներ, գործատուներ, քաղաքական գործիչներ և այլն) կարող են կրթության որակը բնորոշել տարբեր սահմանումներով: Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (այսուհետև՝ ՈԱԱԿ) որդեգրել է որակի մի սահմանում, որը բնութագրում է որակը՝ որպես համարժեքություն հայտարարված նպատակին<sup>1</sup>: Այսինքն՝ յուրաքանչյուր բուհ որոշում է, թե որքանով է իր կողմից մատուցվող կրթական ծառայությունը կամ արդյունքը համապատասխանում իր իսկ սահմանած նպատակներին: Նման սահմանումը թույլ է տալիս հաստատություններին իրենց որդեգրած առաքելության մեջ դնել նպատակներ, որոնց հասնելու աստիճանով է գնահատվելու և ներկայացվելու որակը: ՈԱԱԿ-ը առաջին հերթին հատուկ ուշադրություն է դարձնում նպատակների համարժեքությանը հասարակության պահանջներին և ՀՀ կառավարության կողմից հաստատված չափորոշիչներին ու առաջնահերթություններին:

---

<sup>1</sup> «Հայաստանի մասնագիտական կրթության համակարգում որակի ապահովման ուղենիշներ, չափանիշներ և չափորոշիչներ (աշխատանքային նյութեր)», 2010 թ. ՈԱԱԿ, Համաշխարհային Բանկի հրատարակում: Գլուխ 4, կետ 4.1. էջ 19: <http://www.anqa.am/>

Մասնագիտական կրթության որակի ապահովումը գործընթաց է, որը նպատակաուղղված է որակի պահպանմանն ու բարձրացմանը. այն է՝ դասավանդում և ուսումնառություն, հետազոտություններ, ծառայությունների մատուցում հասարակությանը, վերլուծություն, պատշաճության մակարդակ, կադրերի հավաքագրման և նշանակման ընթացակարգեր, տարբեր կառուցակարգեր ու համակարգեր: Բարձրագույն կրթության որակի ապահովման նպատակն է երաշխավորել մասնագիտական կրթության չափորոշիչների և որակի բարելավումը՝ մասնագիտական կրթությունը ուսանողների, գործատուների և հասարակության կարիքներին համապատասխանեցնելու համար:

## **1.2 Որակի ապահովման համակարգը**

Որակի ապահովման համակարգը ներկայացնում է բուհի գործունեությանը վերաբերող պլանավորման, մշտադիտարկման, խնդիրների վերհանման, բարելավման միջոցառումների ամբողջություն: Որակի ապահովման համակարգի ձևավորումը, սովորաբար, սկսվում է տարբեր շահակիցների ակնկալիքների վերհանումից, որոնք հետագայում կիրառվում են բուհի գործունեությունը գնահատելիս: Այդ գնահատումը լինում է երկու տեսակ՝ ինքնավերլուծություն և արտաքին գնահատում: Այդ գործընթացներն իրականացվում են կարիքների վերհանման և որակի բարելավման ենթակա ոլորտները

առանձնացնելու նպատակով: Գնահատմանը, սովորաբար, հաջորդում է բարելավմանը միտված նոր գործողությունների պլանավորումը, ինչպես նաև դրանց արդյունավետության գնահատումը:

Որակի ապահովման համակարգը սահմանում է մի շարք ընթացակարգեր, մասնավորապես՝

- որակի ապահովմանն ուղղված միջոցառումների կառավարում,
- փաստերի և տվյալների հավաքագրում,
- ծառայությունների որակի գնահատում:

### **1.3 Բարձրագույն կրթության որակի ապահովման չափորոշիչները և ուղենիշները**

Բարձրագույն կրթության որակի հավաստման ներքին և արտաքին համակարգերի սկզբունքները և ընթացակարգերը մշակվել են *Եվրոպայի բարձրագույն կրթության տարածքում /ԵԲԿՏ/* գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների և որակի ապահովման գործակալությունների կողմից կիրառման համար՝ ընդգրկելով որակին և չափորոշիչներին վերաբերող հիմնական դրույթները:

Այս չափորոշիչների և ուղեցույցների նպատակն է աջակցել բարձրագույն ուսումնական հաստատություններին որակի համակարգերի զարգացման, իսկ գործակալություններին՝ որակի արտաքին գնահատման

իրականացման գործում, ինչպես նաև ձևավորել չափանիշների ընդհանուր շրջանակ, որը կարող է կիրառվել և՛ հաստատությունների, և՛ գործակալությունների կողմից: Սա ամեննից չի նշանակում, որ այս չափորոշիչները և ուղեցույցները թելադրելու են գործողություններ և մնալու են անփոփոխ:

#### **1.4 Որակի ապահովման Եվրոպական չափորոշիչները և ուղենիշները**

Որակի ապահովման Եվրոպական չափորոշիչները և ուղենիշները (այսուհետև՝ ՈԱԵՉՈԻ) հիմնված են ԵԲԿՏ բարձրագույն կրթության որակի ներքին և արտաքին ապահովման մի շարք հիմնարար սկզբունքների վրա: Դրանք են.

- բարձրագույն կրթություն տրամադրողները պատասխանատու են իրենց մատուցած նյութի որակի և դրա ապահովման համար,
- բարձրագույն կրթության որակի և չափորոշիչների նկատմամբ հասարակության հետաքրքրության պաշտպանությունը,
- ԵԲԿՏ-ում ուսանողների և բարձրագույն կրթության այլ շահակիցների համար ուսումնական ծրագրերի որակի բարձրացումը,

- արդյունավետ կազմակերպական կառուցվածքների ներդրումը, որոնց շրջանակներում հնարավոր կլինի մատուցել և աջակցել ուսումնական ծրագրերին,
- որակի ապահովման գործընթացում արտաքին փորձագիտության կիրառման և թափանցիկության կարևորությունը,
- բարձրագույն կրթական հաստատություններում որակի միջավայրի խրախուսումը,
- այնպիսի գործընթացների զարգացումը, որոնց միջոցով բարձրագույն կրթական հաստատությունները կապահովեն հաշվետվողականություն, այդ թվում պետական և մասնավոր ներդրումների համար,
- հաստատությունների որակի ցուցադրում, ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս,
- բազմազանությանը և նորարարությանը չխոչընդոտող գործընթացներին կիրառում:

#### Չափորոշիչների և ուղենիշների նպատակներն են՝

- ԵԲԿՏ-ում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողներին մատչելի կրթության ապահովման բարելավումը,
- բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի կառավարման և բարձրացման հարցում դրանց աջակցելը, հետևաբար ինստիտուցիոնալ ինքնավարության հաստատման գործում օգնելը,

- որակի ապահովման գործակալությունների աշխատանքի համար հիմքերի ստեղծելը,
- որակի արտաքին ապահովումն ավելի թափանցիկ և շահակիցների/ընդգրկվածների համար ավելի դյուրին դարձնելը:

Չափորոշիչների և ուղենիշների խնդիրներն են՝

- խրախուսել մտավոր, կրթական և գիտական նվաճումները խթանող բարձրագույն կրթական հաստատությունների զարգացումը,
- բարձրագույն ուսումնական հաստատությունների և այլ համապատասխան գործակալությունների որակի ապահովման սեփական միջավայրի զարգացման համար աջակցման և ուղղորդման ռեսուրսների տրամադրումը,
- բարձրագույն կրթական գործընթացների և արդյունքների համապատասխան հաստատությունների, ուսանողների, գործատուների և այլ մասնակիցների սպասումների խրախուսումը,
- ԵԲԿՏ-ում որակի ապահովման և բարձրագույն կրթության մատուցման համար ընդհանուր շրջանակի ներդրումը:

Որակի ապահովման եվրոպական չափորոշիչները և ուղենիշները բաղկացած են՝

Մաս 1: ՈԱԵԶՈԻ-ներ բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համար:



Մաս 2: ՈԱԵԶՈՒ-ներ քարձրագոյն կրթոյթյան որակի արտաքին ապահովման համար:

Մաս 3: ՈԱԵԶՈՒ-ներ որակի արտաքին ապահովման գործակալոյթոյնների համար:

Որակի հավաստման հիմնական ուղեցոյցը «Որակի ապահովման Եվրոպական չափորոշիչները և ուղենիշները» փաստաթոյթոյթն է, որով առաջնորդվում են Բոլոնիայի գործընթացի անդամ երկրները:

## **1.5 Որակի ներքին (բուհական) ապահովման չափորոշիչները և ուղենիշները**

Ներկայոյթում գերիշխում է կրթոյթյան պլանավորման այնպիսի մեթոդաբանոյթոյթն, որի դեպքում կրթական վերջնարոյթոյթնքները հանդիսանում են քարձրագոյն կրթոյթյան կարևորագոյն կառուցվածքային տարրերից մեկը: Ժամանակակից բուհերի կրթական գործունեոյթյան արոյթոյթնավետոյթյան գնահատման համար գլխավորը ոչ թե ուսումնական գործընթացի պլանավորումը և իրականացումն է (ուսումնական պլանների բովանդակոյթոյթնքը, ուսուցման ժամերը և այլն), այլ ուսումնառոյթյան վերջնարոյթոյթնքները՝ ուսանողների ձեռք բերած գիտելիքը, կարողոյթոյթնքները և հմտոյթոյթնքները, ներառյալ ինքնուրոյթն ուսուցման և ինքնակրթոյթյան միջոցով ձեռք բերվածը: Որակի գնահատման գործընթացի ձանրոյթյան կենտրոնը տեղափոխվում է ուսումնական

գործընթացի վերլուծությունից (կրթական ծրագրեր, ուսանողների ակադեմիական առաջադիմություն և այլն) դեպի կրթական ծրագրերի իրականացման արդյունքում ձևավորված կարողությունների գնահատումը: Գնահատման համակարգն ավելի է կողմնորոշվում դեպի մասնագիտական և անհատական պատրաստվածության ստուգումը, և, առաջին հերթին, դեպի շրջանավարտների աշխատանքի տեղավորման հնարավորությունները և աշխատաշուկայում պահանջված լինելը, որը և պետք է լինի կրթության արդյունքի գնահատման հիմնական չափանիշը: Այս պարագայում որակի ապահովման մեխանիզմները դառնում են կրթական համակարգի՝ ըստ ստացված արդյունքների կառավարման կենտրոնական բաղկացուցիչը: Բարձրագույն կրթության որակի շեշտադրումը հետապնդում է նաև դիպլոմների ու որակավորումների համեմատելիության և ճանաչման ձեռքբերման, եվրոպական կրթության առավելությունների ճանաչման, վստահելիության ու մրցունակության բարձրացման նպատակներ:

Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման եվրոպական և տեղական չափորոշիչները և ուղենիշները վերաբերում են հետևյալ հիմնական տիրույթներին՝

1. *Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ.* հաստատություններն իրենց կրթական ծրագրերի, կրթական տարբեր աստիճանների որակի ու չափորոշիչների ապահովումը ենթադրում է

համապատասխան քաղաքականության և դրան առնչվող ընթացակարգերի մշակում: Դրանք պետք է հետևողականորեն նպաստեն իրենց աշխատանքում որակի կարևորությունը և ապահովումը գնահատող միջավայրի զարգացմանը: Այն ձեռք բերելու համար հաստատությունները պետք է զարգացնեն և իրագործեն որակի շարունակական ամրապնդման ռազմավարություն՝ կարևորելով ուսանողների և մյուս շահակիցների դերը:

2. *Ծրագրերի և կրթական աստիճանների հաստատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում.* հաստատությունները պետք է ունենան ծրագրերի և կրթական աստիճանների հաստատման, պարբերական վերանայման և մշտադիտարկման հաստատված մեխանիզմներ:
3. *Ուսանողների ուսումնառության գնահատում.* ուսանողների ուսումնառությունը պետք է գնահատվի ընդունված և հանրությանը հասանելի չափանիշներով, սահմանված կարգով ու ընթացակարգերով, որոնք համահավասար են կիրառվում:
4. *Պրոֆեսորադասախոսական կազմի որակի ապահովում.* հաստատությունները պետք է ունենան որակյալ և բանիմաց կազմով համալրվելու մեխանիզմներ: Դասավանդող անձնակազմը պետք է մասնակցի արտաքին վերանայմանը, և նրանց կատարած աշխատանքի որակի մասին

տեղեկատվությունը պետք է արտացոլվի բուհի տարեկան զեկույցում:

5. *Ուսումնառության ռեսուրսներ և աջակցում ուսանողներին.* հաստատությունները պետք է հավաստեն, որ ուսանողներն ապահովված են առարկայական ծրագրերով նախատեսված ռեսուրսներով:
6. *Տեղեկատվական համակարգեր.* հաստատությունները պետք է հավաստեն, որ իրենց ուսումնական ծրագրերի և այլ գործառնությունների կառավարման արդյունավետության համար հավաքագրում, վերլուծում և օգտագործում են համապատասխան տեղեկատվությունը:
7. *Հրապարակայնություն.* հաստատությունները պետք է իրենց առաջարկած ծրագրերի և կրթական աստիճանների վերաբերյալ մշտապես հրապարակեն անաչառ տեղեկատվություն:

Այս յոթ տիրույթից յուրաքանչյուրի համար բուհի Որակի կենտրոնը սահմանում է որոշակի չափանիշներ և չափորոշիչներ: Մահմանված չափանիշները կրթական հաստատությունների կողմից պետք է ընկալվեն որպես որակի ապահովման համար անհրաժեշտ ուղենիշներ:

Որակի ներքին ապահովման գործընթացներն ուսումնական հաստատության գործունեության մաս պետք է կազմեն: Որակի ներքին ապահովման համակարգի հիմնական առաքելությունը բարձրագույն ուսումնական

հաստությունների գործունեության շարունակական բարելավման ապահովումն է: Շարունակական բարելավման գործընթացը կարող է իրականանալ ներգրավված կողմերի ստանձնած պարտավորության շնորհիվ՝ միաժամանակ երաշխավորելով մասնակիցների կարողությունների հզորացում՝ աշխատակազմի շարունակական զարգացման միջոցով:

Հաշվետվողականության համատեքստում որակի ապահովումը գործածվում է որպես մշտադիտարկումներ կատարելու մեխանիզմ: Ուսանողները, շրջանավարտները, գործատուները և հասարակությունը բարձր որակ են ակնկալում ուսումնական հաստատություններից: Որակի ապահովումը կարևորագույն գործիք է բուհի կրթական գործունեության համար, որը երաշխավորում է ոչ միայն հասարակության պահանջների և կարիքների բավարարումը, այլև՝ բուհի անկախությունը և ինքնավարությունը: Բուհի հաշվետվողականությունը և թափանցիկությունը երաշխավորելու համար անհրաժեշտ է որակի ներքին ապահովման ռազմավարության և ընթացակարգերի արտաքին գնահատում:

Որակի ներքին ապահովման համակարգերի կազմակերպման և կառավարման պահանջներն են.

1. Բուհի որակի ապահովման ընթացակարգերը կազմել՝ հետամուտ լինելով մասնագիտական կրթության որակի բարելավմանը և պահպանմանը:
2. Որակի ներքին ապահովման քաղաքականությունը պետք է արտացոլի բուհերի առաքելությունն ու

որդեգրած արժեքները և սերտորեն կապված լինի թե՛ կառավարման ռազմավարական պլանի, և թե՛ իրականացվող գործունեության հետ: Որակի ներքին ապահովման քաղաքականությունը կազմակերպության տարբեր գործառույթների և մակարդակների համար պետք է սահմանի որակի պարզ և չափելի խնդիրներ: Գործընթացները պետք է առաքելության, արժեքների և տարբեր ծրագրերի, ձեռքբերումների վերանայման, վերլուծության ու զարգացման հնարավորություն տան:

3. Որակի ապահովման քաղաքականությունը տարածել բուհի գործառույթների և գործողությունների այն ոլորտներում, որոնք ազդում են կրթական ծրագրերի չափորոշիչների պահպանման և որակի ապահովման վրա, ինչպիսիք են՝ դասավանդումը, հետազոտական աշխատանքները, ուսումնառությանն աջակցելու ծառայությունները, կառույցները, կացարանները, կահավորումն ու սարքավորումները, կառավարումը, համայնքային ծառայությունները և համագործակցությունը արտադրության հետ:
4. Որակի ապահովման քաղաքականությունն ուղղել հայտարարված առաքելությունից բխող նպատակների որակյալ իրականացմանը: Ըստ թիրախների կատարողական ցուցիչների վերանայումը նման քաղաքականության բաղկացուցիչ մասն է: Ուսանողների կողմից ակնկալվող կրթական արդյունքներին հասնելու աստիճանը պետք է քննարկման հիմնական առարկան լինի: Կրթական

ծրագրի շարունակական բարելավումը նույնպես պետք է Որակի ապահովման քաղաքականության հիմնական խնդիրը դառնա:

5. Որակի ապահովման քաղաքականության մշակման և ինստիտուցիոնալ որակի ապահովման և բարելավման պատասխանատվությունը թողնել բուհի կառավարման մարմնին: Ընդ որում, կառավարման մարմինը որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի մշակման և իրականացման պատասխանատվությունը կարող է վերահասցեագրել է որևէ այլ մարմնի կամ պաշտոնատար անձի՝ հստակ սահմանված կարգով: Այդ մարմինը կամ անձը որակին առնչվող խնդիրները պետք է անմիջականորեն զեկուցի կառավարման մարմնին, ուստի նա/այն պետք է պատշաճ տեղ զբաղեցնի հաստատության կազմակերպական կառուցվածքում՝ ունենալով իրեն վերապահված գործառույթները կատարելու անհրաժեշտ լիազորություններ:
6. Որակի ապահովման քաղաքականությամբ ապահովել արտաքին փորձագետների ներգրավումը որակի ապահովման քաղաքականության և գործընթացների վերանայման գործընթացներին:
7. Որակի ապահովման քաղաքականությամբ սահմանել արտաքին փորձագետների ընտրության և մասնակցության էթիկայի նորմերի պահպանումը: Փորձագետները պետք է նախապես հայտնեն անձնական, մասնագիտական, ակադեմիական կամ գործնական շահերի առկայության մասին, որոնք կարող

են հակադրության մեջ մտնել իրենց փորձագիտական պարտավորությունների հետ: Փորձագետների անկախությունն ու գործընթացի թափանցիկությունը հաջողության հասնելու որոշիչ գործոններն են, հետևաբար որակի ապահովման քաղաքականության հաջող իրականացման համար բուհը պետք է անհրաժեշտ ռեսուրսներ հատկացնի:

8. Որակի ապահովման գործընթացների ամբողջական նկարագրություն պարունակող որակի ապահովման ձեռնարկի (սույն Ձեռնարկը) առկայությունը: Ձեռնարկը պետք է ներառի որակի ապահովման գործընթացների կառուցվածքային սխեման, դրանցում ընդգրկված հիմնական դերակատարներին, նրանցից յուրաքանչյուրի պատասխանատվության աստիճանը և հաշվետվողականության մակարդակը: Որակի ապահովման գործընթացները պետք է արտացոլեն տվյալ բուհի առանձնահատկությունները, ինչպես նաև հանրային կարիքների և աշխատաշուկայի հետ կապված յուրահատուկ խնդիրներն ու նպատակները: Որակի չափանիշները պետք է համահունչ լինեն բուհի խնդիրներին ամբողջ կազմակերպության, առանձին ֆակուլտետի և մասնագիտության կրթական ծրագրի/ծրագրերի մակարդակում: Ընթացակարգերը չպետք է սահմանափակվեն միայն սույն փաստաթղթում նկարագրված չափանիշներն ընդգրկելով:
9. Որակի ապահովման ընթացակարգերում ընդգրկել չափելի այնպիսի ցուցիչներ և/կամ տվյալներ, որոնց



վերատուգումը միանշանակ կերաշխավորի, որ որակի ապահովման օբյեկտները պատշաճ կերպով դիտարկվել են: Հետևաբար, որակի ապահովման օբյեկտները պետք է սահմանվեն հստակ, լինեն ինստիտուցիոնալ կամ ծրագրային խնդիրներին համադրելի, ինչպես նաև պարզ և չափելի: Որակի արդյունավետ ապահովման և բարելավման համար առանցքային դեր ունի նաև կատարողական փաստաթղթերում տվյալների անաչառ և հստակ արձանագրումը:

10. Ընթացակարգերով ապահովել պաշտոնական որոշումների կայացման և իրականացման ընթացքը: Այս պահանջը բխում է որակի ապահովմանն ուղղված գործողությունների ընթացքում ի հայտ եկած հարցերին/խնդիրներին արդյունավետ կերպով արձագանքելու երաշխիքներ ձևավորելու անհրաժեշտությունից: Հիմնական պահանջներից մեկը որակի պահպանման և բարելավման գործողությունների պարբերական փաստաթղթավորումն է:
11. Հատուկ ուշադրություն դարձնել որակի այնպիսի բաղադրիչների վրա, որոնք հեշտ չեն ենթարկվում քանակական մշտադիտարկման: Բուհը պետք է որդեգրի համապատասխան քաղաքականություն և ռազմավարություն, որ նմանատիպ բաղադրիչների որակի ապահովման ընթացակարգերով շրջանցումը անհնար լինի:

12. Որակի ապահովման ընթացակարգերը յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրի/ծառայության դեպքում պետք է կենտրոնանան.

- ծրագրի/ծառայության խնդիրների վրա,
- ծրագրի/ծառայության առջև դրված խնդիրների և դրանք փաստող տվյալների համապատասխանության վրա,
- թերությունները վերացնելու և բարելավումներ կատարելու գործընթացների արդյունավետության վրա:

Որակի ներքին ապահովման գործընթացներում կարևոր դերակատարություն ունեն բուհերի ներքին որակի ապահովման ստորաբաժանումները:

## **1.6 Որակի արտաքին ապահովումը**

Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային համակարգերի ձևավորման գործընթացում մեծ տարածում է գտել որակի արտաքին գնահատումը, ընդ որում, ծրագրերի կամ բուհերի արտաքին գնահատման ժամանակ հիմնական շեշտը դրվում է որակի չափանիշներին համապատասխանության վրա: Հստակ սահմանազատվում են նաև արտաքին գնահատման նպատակները, այդ թվում՝ որակի համար բուհերի հաշվետու լինելը, կրթության որակի բարձրացումը, գնահատման թափանցիկության ապահովումը, գնահատման չափանիշների ազգային և միջազգային

համադրելիության հասնելը և կրթական հաստատությունների համեմատական դասակարգումը:

Որակի արտաքին ապահովման գործընթացներն ունեն երեք հիմնական նպատակ.

- *Հաշվետվողականություն և թափանցիկություն:* Որակի ապահովման գործընթացները երաշխավորում են, որ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և պետական կրթական չափորոշիչների ապահովման դեպքում հասարակության շահերը պաշտպանված կլինեն, ինչպես նաև հրապարակային են դարձնում առանձին ՄՈՒՀ-երի կրթական ծառայությունների որակը երկրի ներսում և նրա սահմաններից դուրս:
- *Վերահսկում:* Հաստատությունը ոչ միայն վերահսկում է ռեսուրսների ծախսը, այլև ցույց է տալիս, որ, առկա ռեսուրսները արդյունավետ օգտագործելով, հասնում է հնարավորինս բարձր որակի:
- *Որակի բարելավում:* Հաստատությունը քննարկումներ և վերլուծություններ է ձեռնարկում որակի ապահովման գործընթացի արդյունավետության, որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացման նպատակով:

Ընդհանուր առմամբ, որակի արտաքին ապահովման նպատակն է հավաստել, որ բուհերը հետամուտ են հետևյալ հարցերի պատասխաններին՝

- արդյո՞ք բուհը մշակույթ ձևավորող որոշակի ընթացակարգ ունի, որը գործում է հաստատության բոլոր օղակներում և կրթական բոլոր ծրագրերի իրականացման ընթացքում,
- արդյո՞ք բուհը պարբերաբար մշտադիտարկում և արձանագրում է որակական նպատակներին հասնելու իր առաջընթացը, մասնավորապես՝ կրթական ծառայությունների որակի պահպանումն ու հետագա բարելավումը,
- արդյո՞ք որակի ապահովման ընթացակարգերի տվյալներն օգտագործվում են կրթական և վերապատրաստման ծառայությունների որակը բարձրացնելու և սովորողների կարիքներին համապատասխանեցնելու նպատակով,
- արդյո՞ք բուհը մշտադիտարկում է սովորողներին տրամադրվող ծառայությունների արդյունավետությունը,
- արդյո՞ք ձեռնարկվում են համապատասխան գործողություններ որակի ապահովման գործընթացում հայտնաբերված բացթողումները շտկելու համար,
- արդյո՞ք շահակիցներին տրամադրվում է հաստատության և մասնագիտությունների կրթական ծրագրերի որակի վերաբերյալ համարժեք տեղեկատվություն:

Հայաստանի մասնագիտական կրթության որակի ապահովման համար ՈԱԱԿ-ը մշակել է որակի ապահովման համապարփակ շրջանակ, որը կառուցված է չորս մեխանիզմների շուրջ: Դրանք գնահատվում են ըստ սահմանված չափանիշների և չափորոշիչների, որոնց

նպատակն է օժանդակել բուհերին՝ հաստատության և իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի մակարդակում ինքնագնահատում իրականացնելու ու բարելավման կարիք ունեցող ոլորտները բացահայտելու գործում:

Որակի արտաքին ապահովման գործընթացն ընթանում է երեք հիմնական փուլերով.

- որակի արտաքին ապահովման գործընթացի ենթակա կառույցի ինքնագնահատում,
- արտաքին փորձագետների այցելություն,
- երկու փուլերի արդյունքում կայացված որոշում և որոշման հրապարակում:

Հաստատություններն իրենց որդեգրած առաքելության շրջանակում կարող են ներառել նպատակներ, որոնց իրականացման աստիճանով է գնահատվելու որակը: Յուրաքանչյուր ուսումնական հաստատություն պատասխանատու է իր կողմից տրամադրվող կրթության որակի համար, այսինքն՝ ինքն է ներդնում որակի ապահովման ներբուհական համակարգը և իրականացնում որակի ներքին ապահովման գործընթացները: Այլ կերպ ասած, ուսումնական հաստատությունը սահմանում է որակի ապահովմանն ուղղված իր գործունեության շրջանակը, իրականացնում է այն և, անհրաժեշտության դեպքում, իրականացված աշխատանքը հիմնավորում է արտաքին հավատարմագրում իրականացնող լիազորված կազմակերպության մոտ: Հայաստանի Հանրապետությունում որպես արտաքին

հավատարմագրում իրականացնող կազմակերպություն հանդես է գալիս ՈԱԱԿ-ը: ՈԱԱԿ-ը մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ապահովման գործընթացն իրականացնում է ինստիտուցիոնալ հավատարմագրման և ծրագրային հավատարմագրման միջոցով: ՈԱԱԿ-ը միակ անկախ կառույցն է ՀՀ-ում, որն իրավասու է իրականացնել բուհերի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացները, սահմանել այն հաստատություններն ու մասնագիտությունների կրթական ծրագրերը, որոնք բավարարում են պետական կրթական չափորոշիչների և հավատարմագրման չափանիշների պահանջներին, թարմացնել հավատարմագրման չափանիշները, չափորոշիչները և ընթացակարգերը, առաջարկություններ ներկայացնել լրամշակման վերաբերյալ:

### ***Պետական հավատարմագրում***

Պետական հավատարմագրումը պետության կողմից մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեության, մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման և որակի ճանաչման գործընթաց է: Հավատարմագրումը տրվում է որոշակի ժամանակահատվածով՝ երաշխավորելով, որ ուսումնական հաստատությունը կամ կրթական ծրագիրն ունի անհրաժեշտ կարողություն տվյալ ժամանակահատվածում կրթական գործունեություն իրականացնելու համար: Մասնագիտական կրթության հավատարմագրման հիմնական նպատակն է հավաստել բուհերին,

ուսանողներին, նրանց ծնողներին, գործատուներին և շահագրգիռ հասարակությանը, որ մատուցվող կրթական ծառայությունը և մասնագիտական կրթության որակը ճանաչելի են պետության կողմից: Բարձրագույն կրթության ոլորտում պետական հավատարմագրումը ներառում է երկու բաղադրիչ՝ ինստիտուցիոնալ հավատարմագրում և ծրագրային հավատարմագրում:

***Ինստիտուցիոնալ պետական հավատարմագրում.***

Ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) հավատարմագրումը պետության կողմից ուսումնական հաստատության կրթական և որակի ապահովման գործընթացների, մասնագիտությունների կրթական ծրագրերի և պետական կրթական չափորոշիչների և ենթակառուցվածքային հավատարմագրման չափանիշների միջև համապատասխանության ճանաչումն է: Այն պարբերաբար իրականացվող պարտադիր գործընթաց է մասնագիտական բոլոր ուսումնական հաստատությունների համար: Այս գործընթացը թույլ է տալիս պարբերաբար գնահատել բուհի գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև վերահսկել իր իսկ կողմից սահմանված առաքելության իրականացման ընթացքը: Պետք է նշել, որ ինստիտուցիոնալ պետական հավատարմագրումը նախապայման է հանդիսանում ծրագրային հավատարմագրման համար:

## ***Ծրագրային հավատարմագրում.***

Մասնագիտության կրթական ծրագրի հավատարմագրումն իրականացվում է բուհի նախաձեռնությամբ կամավորության սկզբունքով, բացառությամբ պետական ուսումնական հաստատությունների և բժշկական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունների: Ծրագրային հավատարմագրումը պետության կողմից մասնագիտության կրթական ծրագրի, մասնագետների պատրաստման որակի և պետական կրթական չափորոշիչների ու ծրագրային հավատարմագրման չափանիշների միջև համապատասխանության ճանաչումն է: Ծրագրային հավատարմագրման թիրախն առանձին մասնագիտության կրթական ծրագիրն է, և ոչ թե հաստատության կողմից իրականացվող բոլոր կրթական ծրագրերը: Այս գործընթացը թույլ է տալիս պարբերաբար գնահատել մասնագիտության կրթական ծրագրի արդյունավետությունը, ինչպես նաև վերահսկել արդյո՞ք այն ապահովում է ուսումնառության արդյունքների ձեռքբերումն ակնկալվող ամբողջ ծավալով:

## ***Հավատարմագրման ընթացակարգ.***

Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացներն իրականացվում են երեք հաջորդական փուլով.

- I. *Ուսումնական հաստատության ինքնավերլուծություն:* Հավատարմագրման գործընթացը



ենթադրում է հաստատությունների կողմից՝ իրենց առաքելության, նպատակների, խնդիրների, թերացումների և ձեռքբերումների մանրամասն ուսումնասիրություն:

II. *Արտաքին գնահատում անկախ փորձագետների խմբի կողմից:* Փորձագիտական այցի հիմնական նպատակն է պարզել ինքնավերլուծության մեջ նշված փաստերի և տեղեկատվության հավաստիությունը, ձեռք բերել լրացուցիչ տեղեկատվություն հանդիպումների և հարցումների միջոցով, ուսումնասիրել կրթական գործընթացները և լրացուցիչ փաստաթղթերը՝ փորձաքննության ենթակա ուսումնական հաստատության գործունեությանը ծանոթանալու նպատակով: Այսինքն՝ փորձագետներն իրականացնում են փորձագիտական վերլուծություն, որից հետո տրամադրվում են ձեռքբերումների մասին վկայություններ և խորհրդատվություն՝ աշխատանքների հետագա բարելավման նպատակով:

III. *Հավատարմագրող կազմակերպության կողմից վերջնական փորձագիտական գեկույցի պատրաստում և որոշման կայացում:*

## **ԳԼՈՒԽ 2. ՃՇՀԱՀ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

### **2.1 ՃՇՀԱՀ որակի ներքին ապահովման համակարգի ընդհանուր նկարագրությունը և կազմակերպական կառուցվածքը**

*Կրթության որակի վրա ազդող հիմնական գործոնները.*

ՃՇՀԱՀ-ում կրթության որակի վրա ազդող հիմնական գործոնները, որոնք համալսարանի կողմից կառավարման կարիք ունեն, ներկայացված են ստորև:

*Կրթական ծրագրերը և դրանց իրականացման որակը՝*

- կրթական ծրագրերի չափորոշիչները և մասնագիտության որակավորման բնութագրիչները,
- ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը,
- ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները,
- ուսանողական համակարգի որակական բնութագրերը,
- ուսումնական գործընթացի կազմակերպումը և կառավարումը:

*Դասախոսական կազմի որակը՝*

- դասախոսական կազմի որակավորման մակարդակը,
- դասավանդման հմտությունները:

***Ուսումնառության ռեսուրսները և օժանդակ ծառայությունները՝***

- ուսումնական և մեթոդական գրականությունը,
- տեղեկատվական ռեսուրսները և տեխնոլոգիաները,
- ուսումնառության աջակցման ծառայությունները:

***Կրթական ծրագրերի կապն աշխատաշուկայի և գործատուների հետ՝***

- ծրագրի (մասնագիտության) և համապատասխան որակավորման պահանջվածությունը տեղական և միջազգային աշխատաշուկայում,
- պոտենցիալ գործատուների ներգրավվածությունը ծրագրի նախնական մշակման և/կամ իրականացման գործընթացներին:

***Որակի ներքին ապահովման համակարգը և կիրառվող մեխանիզմները՝***

- որակի ապահովման քաղաքականությունը և ռազմավարությունը,
- որակի գնահատման և ապահովման ընթացակարգերը:

***Որակի ներքուհական գնահատման հիմնական օբյեկտները՝***

- կրթական ծրագրերը և դրանց առանձին բաղադրիչները,
- ուսանողների ձեռք բերած կրթական վերջնարդյունքները,

- պրոֆեսորադասախոսական կազմի որակը,
- դասավանդման, ուսումնառության և գնահատման որակը,
- ուսումնառության ռեսուրսները և ուսանողական օժանդակ ծառայությունները,
- տեղեկատվության ներքին և արտաքին համակարգերը,
- որակի ապահովման ընթացակարգերի և մեխանիզմների արդյունավետությունը:

***ՃՇՀԱՀ որակի ապահովման համակարգում ներգրավված հիմնական ստորաբաժանումներն ու կառույցները և պատասխանատվությունների բաշխումը նրանց միջև.***

**ՃՇՀԱՀ կառավարման խորհուրդը** հաստատում է որակի ապահովման քաղաքականությունը, որակի շարունակական բարձրացման ռազմավարությունը, ՃՇՀԱՀ տարեկան հաշվետվության շրջանակներում քննարկում է որակի ապահովման գործընթացների արդյունքները և առաջարկում բարելավման միջոցառումներ:

**ՃՇՀԱՀ որակի ապահովման խորհուրդը՝**

- հանդես է գալիս որպես փորձագիտական և խորհրդատվական մարմին՝ գնահատելու համար որակի ապահովման ընթացակարգերի և չափանիշների համապատասխանությունն ընդունված չափորոշիչներին,

- հաստատում է որակի ապահովման վերաբերյալ հայեցակարգային, կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերը,
- որակի ապահովման խորհրդի նախագահը, ի պաշտոնե, հանդիսանում է ՃՇՀԱՀ ռեկտորը: Խորհրդի կազմը հաստատվում է ՃՇՀԱՀ ռեկտորի կողմից, իսկ որակի ապահովման խորհրդի ձևավորումն ու հետագա աշխատանքների կազմակերպումն ապահովում է ՃՇՀԱՀ որակի ապահովման կենտրոնը: Որակի ապահովման խորհրդի անդամներն են՝ ՃՇՀԱՀ ռեկտորը, ՃՇՀԱՀ որակի ապահովման կենտրոնի ղեկավարը, համալսարանի 2 դեկաններ, 2 ամբիոնի վարիչներ, կրթական ծրագրերի և ուսումնամեթոդական վարչության պետը, վարչական կազմի ներկայացուցիչ, մեկական ուսանող և գործատու:

### **Որակի ապահովման կենտրոնը՝**

- մշակում է որակի ներքին ապահովման ընթացակարգեր կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման համար, հետևում և աջակցում է ՃՇՀԱՀ ստորաբաժանումներում դրանց իրականացմանը,
- կազմակերպում է կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացները՝ որակի ապահովման ընթացակարգերին համապատասխան,

- պատասխանատու է ուսումնառության և դասավանդման որակի գնահատմանն առնչվող գործընթացների համակարգման և իրականացման համար,
- պատասխանատու է դասավանդման և ուսումնառության որակի չափման գործիքակազմի (ուսանողական հարցումներ) մշակման համար,
- գնահատում է դասախոսական կազմի ուսումնամեթոդական գործունեությունը և դրա արդյունավետությունը:

### **ՃՇՀԱՀ որակի պատասխանատուների ցանցը՝**

- ներառում է ներկայացուցիչներ բուհի պրոֆեսորադասախոսական, ուսանողական և վարչական կազմից
- իր գործունեությունն իրականացնում է Կենտրոնի ղեկավարի հանձնարարությամբ՝ նախապես հաստատված գործողությունների տարեկան աշխատանքային ծրագրերին և դրանց իրականացման ժամանակացույցին համապատասխան,
- սահմանված լիազորությունների շրջանակներում, ինքնուրույն և անձնական պատասխանատվությամբ ուսումնական (ֆակուլտետ, ամբիոն, քոլեջ, դպրոց և այլն) և վարչական ստորաբաժանումներում կազմակերպում ու իրականացնում է կրթության որակի ապահովման ուղղությամբ սահմանված գործընթացներն ու գործառույթները,

- կազմում է իր գործունեության կիսամյակային և տարեկան աշխատանքային ծրագրերը և այն ներկայացնում է Կենտրոնի ղեկավարի հաստատմանը,
- կենտրոնի համաձայնությամբ դիտարկումներ, հարցումներ և ուսումնասիրություններ է իրականացնում համալսարանի ստորաբաժանումներում,
- յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի և ուսումնական տարվա ավարտից հետո, մեկամյա ժամկետում, իրականացնում է որակի ապահովման ուղղությամբ ստորաբաժանումներում կատարված աշխատանքների ամփոփում, կազմում է հաշվետվություն և այն ներկայացնում Կենտրոնի հաստատմանը:

### **ՃՇՀԱՀ ֆակուլտետները՝**

- պատասխանատու են ֆակուլտետի մակարդակով որակի ապահովման և վերահսկման բոլոր գործառույթների կազմակերպման և իրականացման համար,
- կազմակերպում են ֆակուլտետի կրթական ծրագրերի մշակման, իրականացման ընթացիկ մոնիթորինգի ու պարբերական վերանայման գործընթացները՝ որակի ապահովման ընթացակարգերին համապատասխան,
- ապահովում են անհրաժեշտ ռեսուրսներ (դասախոսական կազմ, լաբորատոր սարքավորումներ, ուսումնական գրականություն և այլն) և ուսումնառության օժանդակության այլ միջոցներ

կրթական ծրագրերի հաջող իրականացման համար՝  
ծրագրերի պահանջներին համապատասխան,

- կազմակերպում են ֆակուլտետի կրթական ծրագրերի  
ինքնագնահատումը և համապատասխան զեկույցի  
կազմումը՝ ծրագրերի տարեկան մոնիթորինգի,  
պարբերական վերանայման և ծրագրային  
հավատարմագրման գործընթացների շրջանակներում:

### **Որակի ապահովման ֆակուլտետային հանձնաժողովները՝**

- վերահսկում են ֆակուլտետներում կրթական ծրագրերի  
մշակման, փոփոխման և դրանց որակի ապահովման  
գործընթացների իրականացումը,
- վերահսկում են կրթական ծրագրերի պատշաճ  
ռեսուրսային և մեթոդական ապահովվածությունը,
- պատասխանատու են ֆակուլտետում ուսուցման  
որակի ապահովման և ներքին վերահսկման, ինչպես  
նաև համալսարանի մակարդակով ընդունվող  
որոշումների հետևողական իրագործման հսկողության  
համար:

### **ՃՇՀԱՀ ուսանողները՝**

- ընդգրկված են ուսման որակի գնահատման  
գործընթացներում՝ մասնակցելով դասավանդման,  
ուսումնառության և գնահատման արդյունավետության  
վերաբերյալ ուսանողական հարցումներին և



շրջանավարտների՝ իրենց ստացած կրթության որակի գնահատմանն ուղղված հարցումներին,

- ընդգրկված են ՃՇՀԱՀ և ֆակուլտետների գիտական խորհուրդներում, կրթության որակի ապահովման պատասխանատուների ցանցում,
- մասնակցում են ՃՇՀԱՀ որակի ապահովման գործընթացներին՝ որպես ուսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ,
- համաձայն սահմանված ընթացակարգի՝ մասնակցում են ՃՇՀԱՀ ինքնագնահատման գործընթացներին՝ որպես ինքնագնահատման աշխատանքային խմբի անդամներ:


**Արտաքին գնահատողները (փորձագետներ, շրջանավարտներ, գործատուներ)**

- կատարում են համալսարանի գործունեության, որակի ներքին ապահովման համակարգի և կրթական ծրագրերի արտաքին փորձաքննություն՝ ինստիտուցիոնալ ու ծրագրային հավատարմագրման գործընթացների շրջանակներում,
- ընդգրկված են շրջանավարտների ավարտական ամփոփիչ ատեստավորման (ավարտական ամփոփիչ քննության և ավարտական աշխատանքի պաշտպանության) հանձնաժողովներում,
- ՃՇՀԱՀ նախաձեռնությամբ կարող են մասնակցել ուսանողների ընթացիկ և կիսամյակային գնահատման գործընթացներին,

- մասնակցում են ՃՇՀԱՀ-ում իրենց ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումներին,
- մասնակցում են ՃՇՀԱՀ շրջանավարտներից գործատուների բավարարվածության հարցումներին:

Գծապատկեր 1-ում ներկայացված է ՃՇՀԱՀ որակի ներքին ապահովման համակարգի կազմակերպական սխեման:

Պատկեր 1. ՃՀԱՀ որակի ներքին ապահովման համակարգի կազմակերպական սխեմա:



## **2.2 ՃՇՀԱՀ որակի ներքին ապահովման համակարգի ելակետային սկզբունքները, նպատակներն ու խնդիրները**

ՃՇՀԱՀ որակի ներքին ապահովման համակարգի կառուցումը ուղղորդվում է Եվրոպական չափորոշիչներում և ուղենիշներում ձևակերպված հետևյալ հիմնարար սկզբունքներով.

- կրթության որակի ապահովման համար ՃՇՀԱՀ-ը կրում է առաջնային պատասխանատվություն,
- կրթության որակի ապահովման համար ՃՇՀԱՀ-ը հաշվետու է իր ուսանողներին, գործատուներին և հիմնադիրներին,
- ՃՇՀԱՀ-ը պետք է կարողանա հավաստել իր տրամադրած կրթության որակն ազգային և միջազգային հարթությունում,
- ՃՇՀԱՀ կրթական ծրագրերի որակը շարունակաբար բարելավվում է՝ ուսանողների և այլ շահակիցների սպասելիքներին համապատասխան:

Այս սկզբունքների իրականացմամբ սահմանվում են ՃՇՀԱՀ որակի ներքին ապահովման համակարգի հետևյալ հիմնական նպատակները՝

1) պահպանել ՃՇՀԱՀ-ի կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների համար սահմանված կրթական չափորոշիչները,

2) ապահովել կրթության որակի համար ՃՇՀԱՀ-ի հաշվետվողականությունը ուսանողների, գործատուների, հիմնադիրների և ֆինանսավորող այլ կազմակերպությունների հանդեպ,

3) ստեղծել մեթոդական և կազմակերպական հիմք՝ ՃՇՀԱՀ-ի և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար,

4) խթանել ուսուցման որակի շարունակական բարելավումը և որակի մշակույթի զարգացումը ՃՇՀԱՀ-ում,

5) նպաստել ՃՇՀԱՀ-ի առաքելության իրականացմանը՝ նրա սահմանած տեսլականին, ռազմավարական նպատակներին և խնդիրներին համապատասխան:

Սահմանված նպատակներից բխում են ՃՇՀԱՀ-ի որակի ներքին ապահովման համակարգի հետևյալ խնդիրները՝

- ապահովել կրթական ծրագրերի պատշաճ մշակումը, հաստատումը, ընթացիկ մշտադիտարկումը, պարբերական վերանայումն ու շարունակական բարելավումը՝ որակի ապահովման սահմանված ընթացակարգերի համապատասխան,

- կրթական ծրագրերի որակի ներքին և արտաքին գնահատումն ու հավատարմագրումն իրականացնելու համար ստեղծել պայմաններ,

- որակի ապահովման համար ստեղծել հաշվետվողականության ընթացակարգեր և նախաաձեռնել համապատասխան գործընթացներ,
- ապահովել որակի ներքին ապահովման ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունը, դրանցում ուսանողների և շրջանավարտների, հիմնական գործատուների և արտաքին փորձագետների մասնակցությունը,
- տրամադրվող կրթության որակի շարունակական բարելավման համար ձևավորել անհրաժեշտ նախադրյալներ և խթանող մեխանիզմներ,
- ուսանողների համար ստեղծել ուսումնառության պատշաճ հնարավորություններ՝ կրթական ծրագրերից ակնկալվող վերջնարդյունքները հաջողությամբ ձեռք բերելու համար,
- երաշխավորել որակի ներքին ապահովման քաղաքականության և ռազմավարության համապատասխանությունը ՃՇՀԱՀ-ի տեսլականին, առաքելությանը և ռազմավարական նպատակներին:

ՃՇՀԱՀ-ի որակի ներքին ապահովման քաղաքականությունը և ռազմավարությունն ուղղված են վերոնշյալ խնդիրների լուծմանը, ինչն էլ նախադրյալներ է ստեղծում համալսարանի սահմանած նպատակների իրականացման համար:

## **2.3 ՃՇՀԱՀ-ի որակի ապահովման հիմնական գործընթացները**

Ստորև ներկայացված են ՃՇՀԱՀ որակի ներքին ապահովման հիմնական գործընթացները՝ ըստ ոլորտների:

### **Սահմանված կրթական չափորոշիչների պահպանում.**

- կրթական չափորոշիչները համապատասխանում են տվյալ ոլորտի որակավորման մակարդակին և սահմանվում են ԵԲԿՏ-ի որակավորումների շրջանակի և որակավորումների ազգային շրջանակի հիման վրա,
- կրթական չափորոշիչները բավարարում են համապատասխան պետական, մասնագիտական, օրենսդրական մարմինների և նմանատիպ այլ հաստատությունների պահանջներին,
- կրթական չափորոշիչները պարբերաբար վերանայվում են՝ դրանց արդիականությունն ու համապատասխանությունն ապահովելու նպատակով,
- կրթական չափորոշիչների մշակման, մշտադիտարկման կամ վերանայման ընթացքում օգտագործվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անկախ փորձագետների հետադարձ կապը:

## **Կրթական ծրագրերի որակի ապահովում.**

**Կրթական ծրագրերի որակի ապահովման համակարգը սահմանում է.**

- ծրագրերի պլանավորում և մշակման արտոնում,
- ծրագրերի մշակում և փաստաթղթային փաթեթիկացում,
- ծրագրերի ներքին փորձաքննություն
- ծրագրերի իրականացման վերահսկում,
- ծրագրերի գնահատում և պարբերական վերանայում:

## **Վերջնարդյունքահեն կրթական ծրագրերի մշակում**

Կրթական ծրագրերի արյունավետ նախագծման և մշակման համար կարևոր նշանակություն ունի կրթական ծրագրի նպատակների սահմանումը և կրթական վերջնարդյունքների ձևակերպումը: Սա ևս մեկ երաշխիք է որակյալ կրթական ծառայությունների մատուցման և կրթության որակի շարունակական ապահովման համար: Կրթական ծրագրի վերջնարդյունքները նախապես սահմանված կրթական ձեռքբերումներ են, որոնք ընդհանուր կերպով ներկայացնում են, թե կրթական ծրագրի ավարտին ուսանողներն ինչ նոր գիտելիքներ, կարողություններ և հմտություններ կունենան: Կրթական վերջնարդյունքները սահմանվում են ընդունելի նվազագույն մակարդակից և պետք է ապահովեն առավելագույն չափադականություն: Կրթական ծրագիրը հաջողությամբ ավարտելու դեպքում ուսանողները պետք է ձեռք բերեն կրթական ծրագրով սահմանված բոլոր կրթական վերջնարդյունքները: Կրթական ծրագրերի որակի ապահովմանն ուղղված գործողությունների հիմքում ընկած




է որակավորումների համաեվրոպական շրջանակը, որի հիման վրա մշակվել են Որակավորումների ազգային շրջանակները: Որակավորումների համաեվրոպական շրջանակը և որակավորումների ազգային շրջանակը սահմանում է կրթական հաստատությունների կողմից սեփական կրթական ծրագրերի վերանայում, ինչի արդյունքում հստակ կսահմանվեն առկա կրթական ծրագրերի վերջնարդյունքները, ինչպես նաև կվերանայվեն այդ կրթական ծրագրերի ներքո գործող առարկայական ծրագրերի կրթական վերջնարդյունքները: Կրթական վերջնարդյունքների ձևակերպման հիմնական նպատակն ակնկալվող գիտելիքի ծավալի ու բովանդակության չափելիության ապահովումն է, որն այս մեթոդաբանությամբ թույլ է տալիս բացառել բոլոր վերացական և ոչ չափելի պահանջներն ու սահմանումները:

Կրթական ծրագրերի վերջնարդյունքների նկարագրության համար առանցքային նշանակություն ունի չափողականության և գնահատման ենթարկվող նպատակների մշակումը, որի համար առավել կիրառական գործիքը Բլումի տաքսոնոմիան է, որով ուսումնառության գործընթացում իմացության դրսևորումները դասակարգվում են ըստ բարդության մակարդակների և յուրաքանչյուր մակարդակի նկարագրման համար օգտագործվում է մշակված բայացանկ: Կրթական վերջնարդյունքները ձևակերպելու համար առ այսօր օգտագործվում է դեռևս 1959 թվականին Բենջամին Բլումի կողմից ներկայացված «Կրթական նպատակների տաքսոնոմիա» անունով գործիքը, որը տեսաբանների կողմից թեև ենթարկվել է բազմաթիվ քննադատությունների, այնուամենայնիվ, շարունակում է

դասական համարվել կրթական ծրագրերի, դասընթացների նախագծման, կրթական վերջնարդյունքների կանխատեսման և մշակման գործընթացի համար:

Դասական տարբերակում Բ. Բլումի տաքսոնոմիայի ճանաչողական խումբը ներկայացնում է վեց մակարդակ՝ գիտելիք, ընկալում, կիրառում, վերլուծություն, սինթեզ և գնահատում: Սակայն Բլումի տաքսոնոմիային անընդհատ անդրադառնում են կրթության ոլորտի տեսաբաններ, ինչի արդյունքում Բլումի տաքսոնոմիայի նախնական տարբերակը վերջին ժամանակներս փոփոխությունների է ենթարկվել: Մասնավորապես տաքսոնոմիայի ճանաչողության խումբը ներկայացնող վեց մակարդակներից վերջին երեքը ներկայացվում են ոչ թե ուղղաձիգ, այլ հորիզոնական կապերով: Ըստ Բլումի տաքսոնոմիայով վերլուծությանը ներկայացվող պահանջների, այս փուլը հասկացական գործընթացի առավել բարդ դրսևորումն է, որը ենթադրում է ոչ միայն բացատրություն և նկարագրություն, այլև սինթեզ: Վերլուծության և սինթեզի կարողություններն իրենց հերթին առաջ են բերում, պայմանավորում են սովորողի գնահատողական կարողությունները, հետևաբար, Բ. Բլումի տաքսոնոմիայի ճանաչողական խումբը ներկայացնող վեց մակարդակները կարելի է ներկայացնել 4 մակարդակով ևս՝ գիտելիք, ընկալում, կիրառում և վերլուծություն-սինթեզ-գնահատում:



### **Ուսանողների գնահատում.**

Ուսանողների գնահատման նպատակն է ապահովել կրթական գործընթացների արդյունավետությունը, համակարգված և անընդհատ ստուգման միջոցով գնահատել ուսուցանվող դասընթացի կրթական մոդուլի ամբողջ ծավալի վերաբերյալ ուսանողի գիտելիքները, խթանել ուսանողների նոր գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերման գործընթացները, ակադեմիական առաջադիմությունը՝ հաշվի առնելով ուսումնառության բոլոր բաղադրիչները: Դասընթացների հիմնավորվածությունն ու արժանահավաստությունը բարձրացնելու նպատակով իրականացվում է երկու տեսակի գնահատում.

- դասընթացի և առանձին ուսումնական մոդուլի յուրացման արդյունքների գնահատում (ընթացիկ և եզրափակիչ քննություններ),
- ծրագրի կրթական վերջնարդյունքների գնահատում (ավարտական ամփոփիչ ատեստավորում):

### **Պրոֆեսորադասախոսական կազմի որակի ապահովում.**

Պրոֆեսորադասախոսական կազմի որակի ապահովումը ենթադրում է ուսումնամեթոդական, մասնագիտական և ընդհանուր գիտելիքների, կարողությունների և հմտությունների շարունակական զարգացում, ինչը ներառում է.

- ուսումնառության և դասավանդման գնահատում,

- դասախոսների վերապատրաստում և կատարելագործում,
- դասախոսական պաշտոնների տեղակալման, տարակարգային առաջաշման և նյութական խրախուսման գործընթացներ:

Դասախոսական կազմի որակի ապահովման ուղղությամբ հատուկ ուշադրության կենտրոնում է պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման կարիքների վերհանման գործընթացը, որը իրականացվում է պարբերաբար անցկացվող հարցումների միջոցով (Հավելված 2):

**Ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների գնահատում.**

- կրթական ծրագրի պահանջներին ուսումնառության ռեսուրսների որակական և քանակական բնութագրերի համապատասխանության գնահատում,
- ուսանողական համակազմի կրթական և անհատական կարիքների բացահայտում և գնահատում,
- օժանդակ ծառայությունների որակից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցումների իրականացում:

Հատկապես կարևորվում է կրթական ծրագրերի իրականացման որակի ապահովման խնդիրը: Հատուկ մշակված ընթացակարգի կիրառմամբ՝ իրականացվում է

դասընթացների անցկացման գործընթացի մշտադիտարկում և դասալսումների միջոցով (Հավելված 1):

## **2.4 ՃՇՀԱՀ որակի ներքին ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավման սկզբունքները**

ՃՇՀԱՀ-ն առանձնահատուկ ուշադրություն է ցուցաբերում որակի ներքին ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավմանը: Ուսանողների ներգրավումը որակի ապահովման և որակի ուժեղացման ոլորտում շարունակաբար եղել է ԵԲԿՏ-ի բոլոր բուհերի որակի զարգացման գործընթացների առանցքային բաղադրիչը: Բուհի որակի ներքին ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավվածությունը կարևորվել է ինչպես 2005թ. Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների մշակման, այնպես էլ 2015թ. դրանց վերանայման գործընթացներում:

Համալսարանի ներսում ուսանողների ներգրավումը որակի գործընթացներում կարևոր է, քանի որ.

- այդպիսով ստեղծվում է մի հարթակ, ուր ուսանողները կարող են իրենց ներդրումն ունենալ կրթության կազմակերպման գործընթացներում,
- նպաստում է, որ ուսանողներին իրենց կրթության նկատմամբ սեփականատիրոջ զգացում ունենան,

- երաշխավորում է այն փաստը, որ ուսանողի կարծիքը հաշվի է առնվում բուհում կայացվող բոլոր որոշումներում,
- այդպիսով ուսանողները պարբերաբար իրականացվող հարցումների միջոցով կարողանում են տրամադրվող կրթական ծառայությունների վերաբերյալ իրենց գնահատականը տալ,
- հնարավորություն է տալիս ուսանողներին քննադատորեն մեկնաբանել բուհում իրականացվող ուսումնառության և դասավանդման գործընթացները,
- խրախուսում է տարբեր շահառուների միջև ուսման և դասավանդման վերաբերյալ կառուցողական բանավեճը,
- այդպիսով ստեղծվում հաղորդակցության մի կարևոր միջոց, որով կապ է ապահովվում բուհի աշխատակազմի և ուսանողների միջև:

Ուսանողների ներգրավվածությունը կրթության որակի ապահովման գործընթացներին նպաստում է ուսանողների ուսումնառության վերջնարդյունքների ապահովմանը: Ուսանողները պետք է հնարավորություն ունենան մասնակցելու կրթության որակի ապահովման գործընթացներին՝ իրենց համար նախընտրելի և հասանելի ձևերով: ՃՇՀԱՀ-ի որակի ներքին ապահովման համակարգի գործունեությունն ուղղված է համալսարանում այնպիսի մշակույթի ձևավորմանը, որի շնորհիվ ստեղծված

միջավայրում խրախուսվում է կրթության որակի ապահովման գործընթացներին ուսանողների ներգրավումը:

Ուսանողների և շրջանավարտների լիարժեք մասնակցությունը ՃՇՀԱՀ որակի ապահովման ներբուհական գործընթացներում որակի ապահովման համակարգի արդյունավետության հիմնական երաշխիքներից է, ինչպես նաև Եվրոպական չափորոշիչների պահանջը: ՃՇՀԱՀ ուսանողները կարող են մասնակցել կրթության որակի ապահովման գործընթացներին հետևյալ եղանակներով.

- ակտիվ մասնակցելով պարբերաբար անցկացվող հարցումներին,
- աջակցելով հարցումների անցկացման գործընթացին,
- մասնակցելով կրթական ծրագրի ուսումնական պլանի կազմմանը,
- ներգրավվելով դասընթացների ծրագրերի բովանդակության ձևավորմանը,
- մասնակցելով դասալսումներին,
- ընդգրկվելով համալսարանի կառավարման բոլոր օղակների աշխատանքներում,
- մասնակցելով համալսարանի ինքնավերլուծության հաշվետվության մշակմանը:

ՃՇՀԱՀ կրթության որակի ապահովման կենտրոնը պարբերաբար անց է կացնում ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցումներ: Ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցումների վերլուծության արդյունքում կազմվում են



հաշվետվություններ, որոնք համապատասխան առաջարկություններով տրամադրվում են ամբիոններին, ֆակուլտետներին և բուհի ղեկավարությանը:

Ուսանողների բավարարվածությունը գնահատվում է հետևյալ հարցումների միջոցով.

- բուհ նոր ընդունված ուսանողների հարցում բուհի ընտրության և նախնական տպավորությունների վերաբերյալ՝ կրթական ծրագրի մեկնարկին (Հավելված 3),
- շրջանավարտների հարցում բուհի ընդհանուր գնահատման վերաբերյալ՝ կրթական ծրագրի ավարտին (Հավելված 6):
- ուսանողների հարցում ավարտված դասընթացների գնահատման համար՝ յուրաքանչյուր կիսամյակում (Հավելված 4),
- ասպիրանտների հարցում ավարտված դասընթացների և հետազոտական միջավայրի գնահատման համար՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում (Հավելված 5),

ՃՇՀԱՀ կողմից մատուցվող ծառայությունների որակի մշտական բարելավման համար խրախուսվում է բուհի գործունեության բոլոր բնագավառների վերաբերյալ ուսանողների կողմից իրենց կարծիքները, առաջարկությունները և բողոքները ներկայացնելը:

## 2.5 ՃՇՀԱՀ որակի ապահովման համակարգի փաստաթղթավորումը

ՃՇՀԱՀ որակի ներքին ապահովման փաստաթղթային բազան բաղկացած է հետևյալ բաղադրատարրերից.

1. ՃՇՀԱՀ որակի ապահովման ձեռնարկ, որը ներկայացնում է որակի ապահովման համակարգի ընդհանուր նկարագրությունը և կազմակերպական կառուցվածքը, որակի բուհական քաղաքականության նպատակներն ու ռազմավարության հիմնադրույթները, որակի կառավարման սկզբունքները, գործառույթները և պատասխանատվության բաշխումը կառավարման մակարդակների ու ստորաբաժանումների միջև, կապը և փոխազդեցությունը բուհական կառավարման այլ համակարգերի միջև, որակի ապահովման հիմնական գործընթացների համառոտ նկարագրությունը:
2. Որակի ապահովման առանձին կազմակերպական գործառույթների վերաբերյալ ընթացակարգային փաթեթ, որը նկարագրում է որակի գնահատման և/կամ ապահովման գործողությունների կատարման մեթոդաբանությունը:
3. ՃՇՀԱՀ որակի ապահովման համակարգի տվյալների բազա, որն ընդգրկում է որակի վերաբերյալ բոլոր հաշվետվությունները, վերլուծական զեկույցները, հարցումների և այլ միջոցառումների ձևաթերթերն ու

արձանագրությունները, համակարգի տեղեկատվական ապահովմանը վերաբերող բոլոր նյութերն ու փաստաթղթերը, ինչպես նաև էլեկտրոնային տեղեկատվության կրիչները:

## **ԳԼՈՒԽ 3. ՃՇՀԱՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ**

### **3.1 ՃՇՀԱՀ որակի ներքին ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը**

Որակի ապահովման քաղաքականությունը ձևակերպում է ՃՇՀԱՀ մտադրությունները որակի ապահովման հիմնահարցերի վերաբերյալ, ինչպես նաև դրանց իրականացման սկզբունքային ուղիները: Քաղաքականության իրականացման գործընթացը պահանջում է որոշակի ընթացակարգային ուղղորդում, որը մի կողմից՝ մանրամասն տեղեկատվություն է ապահովում այն միջոցների վերաբերյալ, որոնցով իրականացվում է քաղաքականությունը, իսկ մյուս կողմից՝ կարգավորում և կոնկրետ գործողությունների է վերածում այդ միջոցները: ՃՇՀԱՀ զարգացման ընդհանուր ռազմավարության կարևորագույն կառուցամասն է որակի շարունակական բարելավման ռազմավարությունը, որը ելնում է համալսարանի ռազմավարական ծրագրի համապատասխան խնդիրներից և ապահովում դրանց գործնական իրականացումը:

Որակի ապահովման քաղաքականությունը, նրա ընթացակարգային հենքը և որակի շարունակական բարձրացման ռազմավարությունը ՃՇՀԱՀ որակի ապահովման համակարգի կարևորագույն բաղադրատարրն են:

### ***ՃՇՀԱՀ որակի ապահովման քաղաքականություն***

ՃՇՀԱՀ որակի ապահովման քաղաքականության նպատակն է բարձրացնել Համալսարանի ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների արդյունավետությունը: Այն ընդգրկում է ՃՇՀԱՀ գործունեության բոլոր հիմնական ասպարեզները՝ նպատակ ունենալով համապատասխանեցնելու դրանք Համալսարանի ռազմավարական նպատակներին և ապահովելու ջանքերի առավելագույն ներդրում այդ նպատակների իրականացման համար:

### ***ՃՇՀԱՀ որակի ապահովման ընթացակարգեր***

ՃՇՀԱՀ որակի ապահովման ընթացակարգերը նպատակ ունեն պլանավորել և կոնկրետ գործողությունների վերաձել որակի ապահովման քաղաքականությունից բխող գործընթացները՝ ուղորդելով դրանց իրականացումն անհրաժեշտ ուղղությամբ:

### ***ՃՇՀԱՀ որակի շարունակական բարձրացման ռազմավարություն***

Որակի շարունակական բարձրացման ռազմավարությունը ՃՇՀԱՀ որակի ապահովման քաղաքականության կարևորագույն բաղադրատարրն է, որը կոչված է ապահովել դասավանդման, ուսումնառության ու գնահատման գործընթացների որակի շարունակական և կայուն բարելավումը՝ ուսանողների և աշխատաշուկայի փոփոխվող պահանջմունքներին ու կարիքներին համահունչ: Դրա հիմնական նպատակն է ուսման որակի կայուն և

շարունակական բարձրացման համար համալսարանի բոլոր մակարդակներում ստեղծել և գործարկել աջակցող արդյունավետ մեխանիզմներ, ինչպես նաև նախադրյալներ՝ որակի ապահովման մշակույթի անշեղ զարգացման համար:

ՃՇՀԱՀ-ն որակի շարունակական բարձրացման իր ռազմավարությունն իրականացնելիս առջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

- 1) վերջնարդյունքահեն կրթական ծրագրերի մշակում և իրականացում, որոնք բովանդակությամբ ու մատուցման ձևերով գրավիչ են ուսանողների համար, համապատասխանում են գործատուների և մասնագիտությունների արդի պահանջներին և մեծացնում են շրջանավարտների աշխատանքի անցնելու հնարավորությունները,
- 2) ուսումնառության հնարավորությունների և փորձի բարելավում՝ ուսուցման ժամանակակից մեթոդների և կրթական տեխնոլոգիաների ներդրման ու դրանց թարմացման միջոցով,
- 3) ուսումնական առաջադիմության բարձրացում՝ ուսանողների կրթական շահագրգռվածության և ինքնուրույն աշխատանքի խթանման, ուսուցման պլանավորման մեջ նրանց դերակատարության մեծացման և կրթական ճկուն այլընտրանքային մոտեցումների ներմուծման միջոցով,
- 4) գնահատման համակարգերի կատարելագործում՝ առաջադիմությունը խթանող նորարարական

մոտեցումների, մեթոդների և տեխնոլոգիաների կիրառմամբ,

- 5) կրթական միջավայրի բարելավում՝ այն ֆիզիկական և վիրտուալ ուսումնական ենթակառուցվածքներին, դասավանդմանն ու ուսումնառությանը աջակցող մեխանիզմների զարգացմանը և դասախոսների ու ուսանողների կարիքներին համապատասխանեցնելու ճանապարհով,
- 6) ուսուցման կազմակերպման այլընտրանքային ճկուն ձևերի ներմուծում՝ ուսուցման և արտադրական փորձառության փուլերի զուգակցման, ուսուցման կազմակերպմանը պոտենցիալ գործատուների ներգրավման, հաճախումների ճկուն ռեժիմների և ուսուցման առցանց ձևերի կիրառման միջոցով:
- 7) դասավանդման որակի, արդյունավետության և մասնագիտական չափորոշիչների կատարելագործում՝ դասախոսական կազմի որակական ցուցանիշների բարձրացման, մասնագիտական կատարելագործման և որակավորման բարձրացման ծրագրերի զարգացման, դասավանդման նոր մեթոդների ու տեխնոլոգիաների ներմուծման ճանապարհով:

### 3.2 Ուսումնառության գնահատումը

ՃՇՀԱՀ-ի ուսումնառության արդյունքների գնահատման քաղաքականության հիմքում ուսանողակենտրոն մոտեցումն է:

Ուսանողների ուսումնառության գնահատումը բարձրագույն կրթության ամենակարևոր բաղադրատարրերից է: Գնահատման արդյունքները կարևոր են ուսանողների հետագա կարիերայի համար, հետևապես, ուսումնառության գնահատումը պետք է իրականացվի մասնագիտորեն՝ հիմք ընդունելով ձեռքբերված ուսումնառության արդյունքները:

Գնահատումը դասավանդողներին և ուսումնառության գործընթացում ներգրավված այլ շահակիցներին արժեքավոր տեղեկատվություն է տրամադրում համալսարանում ուսուցման արդյունավետության և ուսումնառության գործընթացում ուսանողներին ցուցաբերվող աջակցության վերաբերյալ: Դասախոսական կազմի գնահատման մեխանիզմները նպաստում են դասախոսական կազմի որակավորման բարձրացմանը, դասավանդման և հետազոտական աշխատանքների, սովորողների հետ կատարվող արտալսարանային աշխատանքների, իրականացվող ուսումնամեթոդական և գիտամեթոդական աշխատանքների, համալսարանի և նրա ստորաբաժանումների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Դասախոսական կազմի գործունեության գնահատումը համալսարանն իրականացնում է իր կրթական



առաքելությանը և նպատակներին համապատասխան: Գնահատումն իրականացնելու համար համալսարանը պլանավորում է օգտագործել հստակ սահմանված և հրապարակված ընթացակարգեր ու չափանիշներ: Գնահատման համակարգն ու օգտագործվող ընթացակարգերը պետք է ապահովեն ակտիվ ուսուցման մեթոդներով դասավանդման իրականացում և դասընթացների նախանշված բոլոր ելքային արդյունքների ձեռքբերում: Դասավանդման գործընթացը գնահատվում է սահմանված պարբերականությամբ: Գնահատումը կատարվում է նախանշված առաջադրանքների, աշխատանքային պլանների և դրանց կատարման փաստացի արդյունքների համապատասխանության հիման վրա:

Գործընթացը ենթադրում է համապատասխան վերահսկողական ընթացակարգերի առկայություն և դրանց պարբերական ու կանոնավոր իրականացում: Գնահատման գործընթացը դասախոսական անձնակազմին հնարավորություն է տալիս տեղեկանալու իր աշխատանքի կատարողականի մասին՝ հստակ տարանջատված թերություններով և ձեռքբերումներով, իսկ ղեկավար կազմին համապատասխան միջոցառումեր ձեռնարկելու հիմքեր է տալիս: Դասախոսական կազմի գործունեության գնահատումն անհրաժեշտ է իրականացնել բազմակողմ ձևաչափով՝ նրա աշխատանքային միջավայրը կազմող բոլոր հիմնական ոլորտների/գործոնների ընդգրկմամբ, որի նպատակն է նպաստել գնահատման օբյեկտիվությանն ու անաչառությանը: Գնահատման առավել հավաստի արդյունքներ ստանալու նպատակով, խորհուրդ է տրվում

օգտագործել գնահատման ինչպես անհատական (ինքնագնահատում, գնահատում անմիջական ղեկավարի կողմից), այնպես էլ՝ կոլեկտիվ (գնահատում ուսանողների և գործընկերների կողմից) եղանակները:

Ինքնագնահատման (ինքնավերլուծության) ձևաչափը ներառում է դասախոսի կողմից իր աշխատանքային միջավայրը վերլուծելու և գնահատելու, ինչպես նաև իր կրթական գործունեության բարելավմանը խոչնդոտող միջավայրային գործոնները բացահայտելու բաղադրիչները:

Անմիջական ղեկավարի գնահատումը դասախոսի գործունեության կատարողականի և արդյունավետության գնահատումն է, որի ընթացքում վերլուծվում են նրա աշխատանքային կարգապահությունը, կոլեկտիվում համագործակցելու ունակությունները, դասավանդման մեթոդները և դասավանդման որակը, անհատական աշխատանքը ուսանողների հետ, գիտահետազոտական գործունեության արդյունքները և այլն:

Սովորողների կողմից գնահատումը կատարվում է կանոնավոր կերպով՝ սովորաբար մեկ կիսամյակ կամ մեկ ուսումնական տարի պարբերականությամբ իրականացվող հարցումների միջոցով, որն ամփոփում սովորողների ունկնդրած դասընթացի արդյունավետությունը: Այն կարող է իրականացվել մի քանի մակարդակներում. համարուհական՝ համալսարանի ղեկավարության կողմից, տեղական՝ ուսումնական ստորաբաժանման՝ ասենք ամբիոնի, կողմից, և անհատական՝ դասավանդող դասախոսի կողմից: Հարցաթերթիկներում ներառված հարցերի բաղադրակազմը

պետք է հնարավորություն տա գնահատելու ինչպես դասախոսի մասնագիտական գիտելիքների մակարդակը և այդ գիտելիքներն արդյունավետ կերպով ուսանողին փոխանցելու նրա ունակությունները, այնպես էլ դասընթացն ամբողջությամբ:

Գործընկերների գնահատումը կատարվում է այն ուսումնական կառույցի (ամբիոն) դասախոսական կազմի անդամների կողմից, որտեղ աշխատում է գնահատվող դասախոսը: Խրախուսվում է այլ բուհի հարակից առարկայական ոլորտում ուսուցում իրականացնող ուսումնական կառույցի դասախոսների ներգրավումը գնահատման գործընթացում: Գնահատումն իրականացվում է փոխադարձ դասայցելությունների կամ դասալսումների միջոցով: Բազմակողմ գնահատման արդյունքներն ամփոփվում են մեկ ընդհանուր փաստաթղթում, որը տալիս է դասախոսի գործունեության ընդհանրացված քանակական կամ որակական պատկերն ամփոփող ժամանակաշրջանի համար: Ամփոփումն իրականացնելուց հետո Համալսարանի ղեկավար կազմն այդ արդյունքների հիման վրա ընդունում է տարաբնույթ վարչական որոշումներ աշխատանքային պայմանագրերի կնքման/լուծարման, առաջխաղացման, վարձատրության/խրախուսման և այլնի վերաբերյալ:

ՃՇՀԱՀ-ում ուսուցման գործընթացը պետք է գնահատվի ընդունված չափանիշներով, սահմանված կարգով և ընթացակարգերով, ինչպիսին է մշակված և համալսարանում արդյունավետ կերպով գործարկված «Ճարտարապետության եվ շինարարության հայաստանի ազգային համալսարանի հիմնադրամի կրթական

գործընթացներում ուսանողների գործառույթների մասին» կարգը, որով սահմանվում են ուսանողների ուսումնառության գնահատման գործընթացը և առաջարկվում է ուսանողների գիտելիքների գնահատման բազմաբաղադրիչ համակարգը: Բուհում ներդրված գիտելիքների գնահատման բազմաբաղադրիչ համակարգը թույլ է տալիս ապահովել ուսանողների կողմից ավելի խորը և հիմնավոր գիտելիքների յուրացումը՝ կիսամյակի ընթացքում ուսանողի կողմից կատարվող աշխատանքների միջոցով, և դյուրացնել ուսումնառության և դրա գնահատման, հետադարձ կապի ապահովման գործընթացները, ինչպես նաև բարելավել ուսանողի կարգապահությունը և դասընթացներին մասնակցությունը:

Համալսարանի գործունեության ինքնագնահատման կարևոր բաղադրիչ է հանդիսանում ուսումնառության գնահատումը, որը թույլ է տալիս պատկերացում կազմել, թե որքանով է հաջողվում լավ կրթել ուսանողներին: Այստեղ, նախևառաջ, պետք է նկատի ունենալ համալսարանում ուսանողների ուսումնառության գնահատման մեխանիզմների համակարգվածությունը:

- **Ուսուցման նպատակների հստակեցում:** Անհրաժեշտ է նախապես սահմանել, թե դասընթացի ավարտին ինչպիսի արդյունքներ պետք է ցուցաբերի լավ ուսանողը, այսինքն՝ թե ի՞նչ գիտելիք պետք է ունենա և ի՞նչ հմտություններ ու կարողություններ պետք է ցուցաբերի դասընթացը հաջողությամբ ավարտած ուսանողը: Ինչպե՞ս և ինչպիսի՞ հատկանիշներով ենք մենք առանձնացնում ուսման մեջ հաջողակ ուսանողին:

- Սահմանված կրթական արդյունքների չափում:**  
 Որքանով են տվյալ ծրագրով կամ դասընթացով նախատեսված արդյունքները համընկնում դրված նպատակների առավել լայն շրջանակին: Այստեղ կարևոր է սահմանել չափելի արդյունք, որը կհավաստի, թե որքանով է հաջողվել իրագործել դրված նպատակներից յուրաքանչյուրը և որոնց շնորհիվ հնարավոր կլինի չափել և գնահատել ձեռքբերված արդյունքները: Ընդ որում, անհրաժեշտ է հստակ սահմանել գիտելիքի ստուգման նվազագույն պահանջները, որոնք բավարար կլինեն սահմանված գնահատման նվազագույն շեմը հաղթահարելու համար: Առաջադրված նպատակները և դրանց հիման վրա սահմանված գնահատման չափանիշները պետք է էապես տարբերվեն ուսումնառության ընթացքում բավարար, լավ և գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողների համար: Քանի որ այս փուլում են արտացոլվում դասընթացի կամ կրթական ծրագրի առավելություններն ու թերությունները, և հենց այս փուլում է դասընթացը կամ կրթական ծրագիրը առավել հաճախ ենթարկվում փոփոխության:
- Գիտելիքի պարբերական ստուգումների իրականացում՝ ուսումնառության արդյունքների և սահմանված նպատակների համեմատության միջոցով:** Ինչպե՞ս կարող ենք պարզել, թե արդյոք ուսումնառության ընթացքում ուսանողների ձեռքբերումները համապատասխանում են հաջողված ուսումնառության մեր պատկերացումներին:

Ընդհանուր առմամբ, վերջնարդյունքների պարբերական գնահատումը թույլ է տալիս հասկանալ, թե որքանով է հաջողվել հասնել ուսումնառության սահմանված նպատակներին:

- **Ստացված տեղեկատվության օգտագործումն ի նպաստ բարելավման, այլ կերպ ասած՝ ծրագրի վերափոխում ուսուցման և ուսումնառության բարելավման նպատակով:** Ինչպե՞ս ենք մենք ուսումնառության ընթացքում ստացված տեղեկատվությունն օգտագործում ծրագրի բարելավման նպատակով:

Հիմք ընդունելով ուսումնառության արդյունքների և սահմանված նպատակների համեմատության արդյունքները՝ ծրագրի առանձին տարրերը, ներառյալ՝ գնահատման պահանջներն ու չափանիշները, ենթարկվում են համապատասխան փոփոխության՝ նախքան հաջորդ շրջափուլի մեկնարկը:

Ուսանողների ուսումնառության գնահատման ընթացակարգը կօգնի կառուցել դրված նպատակներին միտված դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթաց, որը, ըստ առանձին դասընթացների և կրթական ծրագրերի, ընդլայնում է ուսանողների ուսումնառության բարելավման հնարավորությունները:

Ուսանողների ուսումնառության ընթացակարգերը պետք է՝

- նախագծվեն սպասվելիք ուսումնառության արդյունքների և ծրագրային այլ նպատակների ձեռքբերման չափման համար,
- համապատասխանեն սահմանված նպատակներին,
- նպաստեն դրված նպատակների ձեռքբերմանը,
- սահմանեն գնահատման հստակ և հրապարակված չափանիշներ,
- բացառեն գնահատման գործընթացի ժամանակ առանձին քննողների սուբյեկտիվ մոտեցումները,
- ուսանողի բացակայության, հիվանդության կամ այլ մեղմացուցիչ հանգամանքի վերաբերյալ ունենան հստակ սահմանված կարգ,
- ապահովեն գնահատման գործընթացի իրականացումը՝ համալսարանի կողմից ընդունված ընթացակարգերին համապատասխան:

Գնահատման չափանիշները և ուսումնառության արդյունքներին համապատասխան գնահատման ձևերն ու մեթոդները ներկայացվում են ուսանողներին տրամադրվող ուսումնառության ուղեցույցներում, առարկայական ծրագրերում կամ դասընթացների նկարագրերում: Թափանցիկության և հրապարակայնության ապահովման նկատառումներից ելնելով՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին ՃՀՀԱՀ-ում գործող բոլոր կրթական աստիճանների (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա) համար մշակվում և հրատարակվում է ուսումնամեթոդական ուղեցույց՝ ակադեմիական կրեդիտների կուտակման ու փոխանցման համակարգի և առաջադիմության բազմագործոնային գնահատման

մեթոդաբանության վերաբերյալ: Ուղեցույցը նախատեսված է բուհի պրոֆեսորա-դասախոսական կազմի, ուսումնաօժանդակ անձնակազմի, կրթության ոլորտի մասնագետների, հետազոտողների և ուսանողների համար: Տեղեկատվության հրապարակայնության ապահովման նկատառումներից ելնելով՝ ուղեցույցի էլեկտրոնային տարբերակը տեղադրվում է ՃՇՀԱՀ պաշտոնական կայքում:

### **3.2.1 Գնահատման համակարգի սկզբունքները**

1. Ուսանողի ստացած գիտելիքի, հմտությունների և կարողությունների որակը չափվում են գնահատականներով, այլ ոչ թե կրեդիտներով:
2. Ուսանողին հատկացվող կրեդիտների թիվը կախված է ուսումնառության յուրացման ծավալից:
3. Յուրաքանչյուր ծրագիր և դասընթաց պետք է կազմվի հստակ՝ ուսումնառության սահմանված նպատակներին, գնահատման մեթոդներին և չափելի արդյունքներին համապատասխան:
4. Ուսանողների գիտելիքի գնահատման համակարգը պետք է ունենա գնահատման և նշագրման հստակ և հրապարակված չափանիշներ:
5. Օգտագործվող գնահատման սանդղակը պետք է հնարավորություն տա առանց դժվարության հաշվարկել կիսամյակի և ուսումնառության ողջ ընթացքում ուսանողի վաստակած վարկանիշային միավորները՝ միևնույն ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական



բեռնվածություն ունեցող ուսանողների առաջադիմությունները համեմատելու համար:

6. Օգտագործվող գնահատման սանդղակը պետք է հնարավորություն տա հաշվարկել ուսանողի միջին որակական գնահատականը կիսամյակի և ուսումնառության ցանկացած ժամանակահատվածի համար՝ նրա բացարձակ առաջադիմությունը որոշելու նպատակով:
7. Գնահատումները կարող են կատարվել ինչպես թվային կամ տառային նշագրումով տարբերակված գնահատականներով, այնպես էլ՝ ստուգված / չստուգված սկզբունքով:
8. Գնահատման եղանակից և գնահատականների նշագրման ձևից (տարբերակված գնահատում) անկախ՝ ամփոփիչ գնահատումներն իրականացվում են ուսումնական պարապմունքների ավարտից հետո՝ առանձին քննաշրջաններում կազմակերպվող քննությունների օգնությամբ:
9. Ուսուցման արդյունքի հաշվարկման կրեդիտային համակարգի հիմնական առանձնահատկությունն այն է, որ կրեդիտի հաշվարկման հիմքում ընկած է ուսանողների ինչպես լսարանային, այնպես էլ արտալսարանային և ինքնուրույն աշխատանքին հատկացվող ժամանակը: Ինչը նշանակում է, որ ուսանողը պետք է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվության տրամադրման հնարավորություններ

ստեղծի՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

10. Ուսանողի կողմից կրթական ծրագրի վերջնարդյունքների (համապատասխան գիտելիքներ, հմտություններ և կարողություններ) ձեռք բերումը հաստատվում է ավարտական աշխատանքի (մագիստրոսական թեզ, ատենախոսություն և այլն) կատարումով և պաշտպանությամբ:

11. Ուսանողների գիտելիքի գնահատման գործընթացի արդյունավետությունը գնահատելու նպատակով պարբերաբար իրականացվում են հարցումներ ուսանողության և դասախոսների շրջանում, վերլուծվում են հարցումների արդյունքները և ներկայացվում են բարելավմանն ուղղված առաջարկներ:

12. Գնահատման հիմքում ընկած ուսումնառության արդյունքներին հասնելու գործընթացները, մեթոդաբանությունը դասախոսի կողմից կարող է փոփոխության ենթարկվել, սակայն նման փոփոխությունը պետք է միտված լինի ուսումնառության չափելի արդյունքների սահմանմանը և դրանց գնահատման մեխանիզմների բարելավմանը: ՃՇՀԱՀ-ում ներդրվել և գործում է ուսանողների գիտելիքի ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ:

### **3.2.2 Գնահատման բազմաբաղադրիչային համակարգը**

Գնահատման բազմաբաղադրիչային համակարգը գործում է հետևյալ ընթացակարգով.

- Յուրաքանչյուր առարկայի գծով ուսանողի ամփոփ գնահատականը ձևավորվում է կիսամյակի ընթացքում, գնահատման գործոնների և դրանց կշիռների հիման վրա՝ հաշվի առնելով հաճախումները, գիտելիքի ստուգման միջանկյալ և ամփոփիչ փուլերը, անհատական աշխատանքը, սեմինար, գործնական և լաբորատոր աշխատանքներին ցուցաբերած ակտիվությունը:
- Գիտելիքի ստուգումները ՃՇՀԱՀ-ում կարող են իրականացվել գրավոր կամ բանավոր՝ համաձայն գործող ընթացակարգի: Ընդ որում, գիտելիքի ստուգման ձևի ընտրությունը պետք է բխի տվյալ դասընթացի բնույթից և դասավանդման մեթոդից:
- Առաջադիմության գնահատումը կատարվում է համապատասխան ընթացակարգով՝ հաշվի առնելով ուսումնառության որակի գործոններն ու դրանց ամրագրված կշիռները (համաձայն համալսարանում կրեդիտների կուտակման ու փոխանցման համակարգի կիրառման և առաջադիմության բազմագործոնային գնահատման ընթացակարգի):

### **3.2.3 Ուսումնառության արդյունքների գնահատման ընթացակարգերը**

Գնահատման հիմքում ընկած գործոնները և դրանց գնահատման ընթացակարգերը.

## ***Հաճախումներ և ընթացիկ ակտիվություն***

Ուսումնառության ընթացքում ուսանողի հաճախումները և ընթացիկ ակտիվությունը հանդիսանում են գնահատման ենթակա գործոններ, որոնք դասախոսի կամ վերջինիս հսկողությամբ՝ խմբի ավագի կողմից հաշվառվում են դասախոսությունների, գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ՝ հատուկ մատյաններում: Ոչ կանոնավոր հաճախումներն ուղղակիորեն անդրադառնում են ուսանողի ընթացիկ ակտիվության գնահատականի վրա, որի համար ՃՇՀԱՀ-ում հաստատվել և գործում է հաճախումներից ելնելով ընթացիկ ակտիվության գնահատման սանդղակ:

Ընթացիկ ակտիվությունը գնահատվում է կիսամյակի ընթացքում գործնական, սեմինար և լաբորատոր աշխատանքների կամ դասախոսությունների ժամանակ կատարված հարցումների հիման վրա: Դասընթացի ընթացքում ուսանողի ընթացիկ ակտիվության գնահատումը կարող է իրականացվել դասախոսի հայեցողությամբ, ինչպես անհատական հարցումների, այնպես էլ առանձին առաջադրանքների կատարման հիման վրա:

Ընթացիկ ակտիվության կիսամյակային ամփոփ գնահատականը հաշվարկվում է որպես տվյալ ուսանողի հարցումների գնահատումների պարզ միջին թվաբանական:

## ***Անհատական աշխատանքների կատարման և գնահատման ընթացակարգ***

Մասնագիտական և մասնագիտացման դասընթացների համար կիսամյակի ընթացքում ուսանողին հանձնարարվում է անհատական աշխատանք, որի իրականացման ընթացքում դասախոսն ուսանողի հետ արտալսարանային խորհրդատվական աշխատանք է կատարում:

Անհատական աշխատանքների թեմաները, տրման ձևը, կառուցվածքը և ծավալը հաստատվում են համապատասխան մասնագիտական ամբիոնի կողմից: Անհատական աշխատանքը գնահատվում է դասախոսի կողմից նախնական ուսումնասիրության և ուսանողի կողմից այն բանավոր ներկայացնելու արդյունքում՝ համաձայն գնահատման սանդղակի:

### ***Գիտելիքի միջանկյալ և ամփոփիչ ստուգումներ***

*Քննությունների անցկացման գրավոր կարգ (համակարգչային, թղթային թեստային).*

ՃՇՀԱՀ-ում գիտելիքի ստուգումները կարող են իրականացվել գրավոր կամ բանավոր տարբերակներով: Գրավոր տարբերակը կարող է անցկացվել նաև թեստային համակարգով, որի դեպքում միջանկյալ և ամփոփիչ քննություններն անցկացվում են համակարգչային-թեստային կամ թղթային-թեստային տարբերակներով:

Նշված տարբերակներով գիտելիքի ստուգումներն իրականացվում են՝ համաձայն սահմանված ընթացակարգերի:

## *Քննությունների անցկացման բանավոր կարգ*

ՃՇՀԱՀ-ում բանավոր քննություններն անցկացվում են ամփոփիչ ատեստավորման ժամանակ, ինչպես նաև հատուկ սահմանված և նախապես համաձայնեցված դեպքերում: Նախատեսվում է փոփոխել գիտելիքի գնահատման քաղաքականությունը՝ առաջնորդվելով դասավանդում-ուսումնառություն-գնահատում առանցքային հայեցակարգային դրույթով:

## *Պրակտիկա*

*Բակալավրիատում ուսումնական և արտադրական պրակտիկայի կազմակերպման և գնահատման ընթացակարգ*

Ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկաները կազմակերպվում են ՀՀ-ում գրանցված և գործող կազմակերպություններում, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններում և գիտահետազոտական կազմակերպություններում: Յուրաքանչյուր ուսանողի համար նշանակվում է երկու ղեկավար՝ համապատասխան մասնագիտական ամբիոնում և պրակտիկայի վայրում: Ամբիոնի կողմից նշանակված ղեկավարը պարտավոր է պարբերաբար ծանոթանալ ուսանողի պրակտիկայի ընթացքին՝ նշանակելով ուսանողի հետ հանդիպման օրեր, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ այցելելով պրակտիկայի վայր:

Նախքան պրակտիկայի սկիզբը՝ ուսանողներին տրամադրվում են օրագիր, ուղեգիր և համապատասխան մասնագիտական ամբիոնների կողմից մշակված պրակտիկայի ծրագրերը, որոնցում ներառված են պրակտիկայի վայրում ուսանողին առաջնորդող առաջադրանքները:

Պրակտիկայի ավարտին ուսանողը ներկայացնում է պրակտիկայի հաշվետվություն, որի ներկայացումը կազմակերպվում է ամբիոնի կողմից հաստատված հանձնաժողովի ներկայությամբ:

Պրակտիկան գնահատվում է՝ հաշվի առնելով պրակտիկայի վայրում ձեռք բերված գիտելիքը և գործնական բնույթի հմտությունները: Պրակտիկայի գնահատման համար լուծարք չի կազմակերպվում:

*Մագիստրատուրայում գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկայի կազմակերպման և գնահատման ընթացակարգ*

Մագիստրոսական կրթական ծրագրով ՃՇՀԱՀ-ում նախատեսված է գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկա: Յուրաքանչյուր մագիստրանտի համար նշանակվում է երկու ղեկավար՝ համապատասխան մասնագիտական ամբիոնում և պրակտիկայի վայրում: Ամբիոնի կողմից նշանակված ղեկավարը պարտավոր է պարբերաբար ծանոթանալ մագիստրանտի պրակտիկայի ընթացքին՝ նշանակելով

ուսանողի հետ հանդիպման օրեր, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ այցելելով պրակտիկայի վայր:

Գիտամանկավարժական պրակտիկան անցկացվում է համալսարանում, որի ընթացքում մագիստրանտը գործնական մասնակցություն է ունենում դասավանդման, ուսանողի գիտելիքի ստուգման և գնահատման գործընթացին: Գիտահետազոտական պրակտիկայի անկացման վայր կարող են հանդիսանալ գիտահետազոտական ինստիտուտները, բարձրագույն ուսումնական հաստատությունները, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ՀՀ-ում գրանցված և գործող այլ կազմակերպությունները:

Գիտահետազոտական պրակտիկայի արդյունքը պետք է լինի մագիստրանտի մոտ հետազոտական և վերլուծական կարողությունների դրսևորումը, որն էլ պետք է դրվի պրակտիկայի գնահատման հիմքում: Նախքան պրակտիկայի սկիզբը՝ մագիստրանտներին տրամադրվում են օրագիր, ուղեգիր և համապատասխան մասնագիտական ամբիոնների կողմից մշակված պրակտիկայի ծրագրերը, որոնցում ներառված են պրակտիկայի վայրում ուսանողին առաջնորդող առաջադրանքները:

Պրակտիկայի ավարտին մագիստրանտը ներկայացնում է պրակտիկայի հաշվետվություն, որի ներկայացումը կազմակերպվում է ամբիոնի կողմից հաստատված հանձնաժողովի ներկայությամբ:



Պրակտիկան գնահատվում է համաձայն պրակտիկայի վայրում ձեռք բերված գիտելիքի, գիտահետազոտական և վերլուծական բնույթի հմտությունների: Գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկայի գնահատման համար լուծարք չի կազմակերպվում: Կրթության միջազգային զարգացումները և աշխատաշուկայի պահանջները նոր մարտահրավերներ են առաջ քաշում պրակտիկայի հայեցակարգային փոփոխությունների համար:

### **3.2.4 Դասավանդման սկզբունքները և ընթացակարգերը**

Դասախոսի իրավունքներն ու պարտավորությունները.

- Դասավանդումը, ուսումնառությունն ու գնահատումը դիտարկվում է միասնական տրամաբանության մեջ:
- Դասախոսի ակադեմիական ազատությունը թույլ է տալիս իր հայեցողությամբ ընտրել դասավանդման և գնահատման մեթոդները:
- Դասընթացի սկզբին դասախոսը պարտավոր է ուսանողներին ծանոթացնել դասընթացի ավարտին ակնկալվող կրթական վերջնարդյունքներին, դրանց գնահատման սկզբունքներին և ընթացակարգերին:
- Դասընթացի սկզբին կրթական և առարկայական ծրագրերը պետք է հասանելի լինեն ուսանողների համար:
- Ուսանողներին պետք է տրամադրվի դասընթացի յուրացման համար պարտադիր և խրախուսվող լրացուցիչ գրականության ցանկը:

- Ուսանողներին պետք է հասանելի լինեն գիտելիքի ընթացիկ և ամփոփիչ ստուգման (գնահատման) հարցաշարերը:

Դասընթացի սկզբին դասախոսը կարող է հարցման միջոցով իրականացնել ուսանողների կրթական կարիքների վերհանում, իսկ դասընթացի ավարտին՝ դասավանդման մեթոդաբանության գնահատում:

Հարցման ընթացքում ստացված տվյալների վերլուծության արդյունքները պետք է դասախոսի կողմից հաշվի առնվեն և հիմք հանդիսանան դասավանդման մեթոդների կատարելագործման համար՝ ապահովելով դասընթացի բարելավման շրջափուլի շարունակականությունը:

### **3.3 Պրոֆեսորադասախոսական կազմի հավաքագրումը, ընտրությունը և մասնագիտական զարգացումը**

#### **3.3.1 ՃՇՀԱՀ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման քաղաքականությունը**

Վերջին տարիներին ՀՀ կրթական շուկան ընդգծված ձևով դրսևորում է նոր միտումներ, որոնք սկզբունքորեն փոխում են այդ շուկայում ձևավորված վիճակը՝ դրան հաղորդելով մրցակցային միջավայրի նոր բաղադրիչներ:

Արդյունքում, ՃՇՀԱՀ-ն ծավալում է կրթական շուկայի նոր պահանջներին համահունչ գործունեություն՝ մրցակցությանը դիմակայելու նպատակով: Այս պահանջներն անհրաժեշտ է հաշվի առնել պրոֆեսորադասախոսական կազմի (այսուհետև՝ ՊԴԿ) ընտրության և ձևավորման, ինչպես նաև որակավորման բարձրացման կազմակերպման և այդ գործընթացների հետադարձ կապի ապահովման համար:

ՃՇՀԱՀ ՊԴԿ-ի ձևավորման քաղաքականությունը և ընթացակարգերը հիմնվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի, «Կրթության մասին», «Բուհական և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների դրույթների և ՃՇՀԱՀ կանոնադրության վրա:

ՃՇՀԱՀ-ում գործում են մի շարք կարգեր, կանոնակարգեր և ընթացակարգեր, որոնք կոչված են նպաստելու անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորա-դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրությանը և մասնագիտական զարգացմանը: Այս գործընթացի բաղկացուցիչ մասն է կազմում «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի մրցութային ընթացակարգով ընտրովի պաշտոնների ընտրության կարգը, որը սահմանում է թափուր կամ նոր ստեղծված ընտրովի պաշտոնների, այլ մարմինների կազմի ընտրության մրցութին մասնակցելու պայմանները, հավակնորդների առաջադրման և ընտրության, ինչպես նաև

մրցույթում հաղթող անձի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը:

Դասախոսական կազմի պլանավորումը և տարակարգումն իրականացվում են այնպես, որ բոլոր կրթական ծրագրերն ու դասընթացներն ապահովվեն բավարար թվով որակյալ դասախոսներով, և ձևավորվի անհրաժեշտ ռեսուրս կրթական ծրագրերի ապահովման և շարունակական նորացման ու արդիականացման համար: Այդ առումով կարևորվում են հետևյալ հիմնական գործոնները:

- Համալսարանն ունի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման հաստատված կարգ և այն իրականացնելու հստակ գործընթացներ, որոնք ներառում են կադրերի ընտրությունը և պաշտոնակալումը:
- Համալսարանում դասախոսական կադրերի մրցութային ընտրությունը համարվում է բարձրորակ կադրեր ներգրավելու կարևոր նախապայման և իրականացվում է սահմանված և նախապես հրապարակված չափանիշներով ու մեթոդներով պլանավորված հաստիքների պահանջները բավարարող թեկնածուների խմբից: Որպես կադրերի ընտրության չափանիշներ կարող են սահմանվել մասնագիտական կրթությունը, որակավորումը, մասնագիտացումը և դրանց համապատասխանությունը դասավանդման առարկայական ոլորտին, աշխատանքային փորձը և մանկավարժական ձիրքի

առկայությունը, գիտական աստիճանը, կոչումը և այլն:

- Նոր աշխատողների պաշտոնակալումն իրականացվում է դասախոսական կազմի տարբեր տարակարգերի՝ ասիստենտի, դոցենտի, պրոֆեսորի համար սահմանված աշխատանքային բնութագրերին համապատասխան: Դասախոսական կազմի աշխատանքի վարձատրության նորմերում հաշվի են առնված աշխատողի մասնագիտական որակավորման մակարդակը, որը խրախուսում է դասախոսական կազմի որակի շարունակական բարելավումը:

ՃՇՀԱՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումն իրականացվում է պայմանագրային հիմունքներով, որին նախորդում է պաշտոնի հավակնորդի բաց մրցութային կարգով ընտրությունը: Մրցութային ընտրության գերակա նպատակը համալսարանի հիմնական ՊԴԿ ձևավորումն է: Կրթական ծրագիրն իրականացնելու համար ՃՇՀԱՀ-ն կարող է հրավիրել համատեղությամբ աշխատող լրացուցիչ դասախոսական կազմ՝ ոլորտի առաջատար մասնագետներ, նախապատվություն տալով գիտական աստիճանի և կոչման առկայությանը (0.25-0.5 դրույքաչափով, ինչպես նաև ժամավճարային սկզբունքով), ովքեր հրամանագրվում են ռեկտորի կողմից մինչև մեկ տարի ժամկետով:

### 3.3.2 Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման ընթացակարգը

ՃՇՀԱՀ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորումն իրականացվում է հետևյալ կարգերով՝

- ա) թափուր պաշտոնների տեղակալման,
- բ) պայմանագրային կարգով դասախոսների ընդգրկման:

Թափուր պաշտոնների տեղակալման կարգով պրոֆեսորադասախոսական կազմի համալրումն ամբիոններում առաջանում է.

- ա) պաշտոնավարման հնգամյա ժամկետը լրանալու,
- բ) տարեկան ուսումնական բեռնվածության երաշխավորված կայուն աճի,
- գ) առանձին անձանց առողջական վիճակի կամ այլ պատճառներով գիտամանկավարժական գործունեության վաղաժամկետ դադարեցման,
- դ) պայմանագրի ժամկետը լրանալուց հետո այն չվերակնքվելու դեպքերում:

Թափուր պաշտոնների տեղակալման կարգով, որպես կանոն, համապատասխան պաշտոնների կարող են հավակնել այն անձինք, որոնց բարձրագույն կրթությունը, գիտական աստիճանը, կոչումը կամ գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է (հարակից է) տարակարգի համար

սահմանված ուսումնական, հետազոտական և մեթոդական-կազմակերպչական գործունեության ցուցանիշներին:

Պրոֆեսորադասախոսական կազմի համար սահմանված են հետևյալ տարակարգերը՝ դասախոսի, ասիստենտի, դոցենտի, պրոֆեսորի պաշտոններ: Պրոֆեսորադասախոսական կազմի բոլոր տարակարգերի աշխատողները դասախոսներ են:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի տարակարգերին ներկայացվող պահանջներն են.

## **ՊՐՈՖԵՍՈՐ**

- 1) Համալսարանի պրոֆեսորի պաշտոն կարող են զբաղեցնել անձինք, ովքեր, որպես կանոն, ունեն պրոֆեսորի գիտական կոչում:
- 2) Պրոֆեսորի համար, ըստ պրոֆեսորադասախոսական տարակարգերի, սահմանվում են ուսումնական, հետազոտական և մեթոդական-կազմակերպչական գործունեության հետևյալ ցուցանիշները.
  - ա) դասախոսությունների վարում (հիմնականում մագիստրատուրայում և ասպիրանտուրայում),
  - բ) գիտամեթոդական սեմինարների անցկացում, մագիստրանտների և ասպիրանտների ատենախոսությունների ղեկավարում,

- գ) մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերով նախատեսված նոր մասնագիտությունների ու դասընթացների հիմնում և կազմակերպում,
- դ) ատենախոսության (թեկնածուական, դոկտորական) պաշտպանությունից հետո գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների, մասնավորապես՝ գիտական մենագրությունների և ուսումնական ձեռնարկների հրատարակում,
- ե) զեկուցումներ հանրապետական և միջազգային գիտաժողովներում,
- զ) ամբիոնում հետազոտական ծրագրի, խմբի, լաբորատորիայի հիմնում և ղեկավարում,
- է) մասնակցություն ազգային և միջազգային բուհական, գիտահետազոտական, գիտամեթոդական, փորձագիտական, ինչպես նաև գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների, հանձնախմբերի, հանրապետական և միջազգային գիտատեխնիկական միությունների, ընկերակցությունների և այլ մարմինների աշխատանքներին,
- ը) խորհրդատվական գործունեություն,
- թ) գիտության տվյալ բնագավառում ստացած արդյունքների բավարար ճանաչում հանրապետությունում և նրա սահմաններից դուրս:



## ԴՈՑԵՆՏ

- 1) Համալսարանի դոցենտի պաշտոնը կարող են զբաղեցնել անձինք, ովքեր, որպես կանոն, համապատասխան մասնագիտության գծով ունեն դոցենտի գիտական կոչում:
- 2) Դոցենտի համար, ըստ պրոֆեսորադասախոսական տարակարգերի, սահմանվում են ուսումնական, հետազոտական և մեթոդական-կազմակերպչական գործունեության հետևյալ ցուցանիշները.
  - ա) դասախոսությունների վարում (հիմնականում բակլավիրիատում, մագիստրատուրայում և ասպիրանտուրայում),
  - բ) գիտամեթոդական սեմինարների անցկացում,
  - գ) ավարտական աշխատանքների, ատենախոսությունների ղեկավարում՝ սահմանված կարգով,
  - դ) գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հրատարակում,
  - ե) հետազոտական աշխատանքների կազմակերպում և իրականացում,
  - զ) զեկուցումներ հանրապետական և միջազգային գիտաժողովներում,
  - է) մասնակցություն ծրագրային, մեթոդական և մշտական հանձնախմբերի, խորհուրդների, որակավորման և գիտական աստիճաններ շնորհող մարմինների, փորձագիտական և խորհրդատվական հանձնախմբերի աշխատանքներին:

## ԱՄԻՍՏԵԼՏ

- 1) Համալսարանի ասիստենտի պաշտոն կարող են զբաղեցնել անձինք, որոնք համապատասխան մասնագիտության գծով ունեն գիտական աստիճան կամ ավարտել են ասպիրանտուրան:
- 2) Ասիստենտի համար, ըստ պրոֆեսորադասախոսական տարակարգերի, սահմանվում են ուսումնական, հետազոտական և մեթոդական-կազմակերպչական գործունեության հետևյալ ցուցանիշները.
  - ա) դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների վարում (հիմնականում բակալավրիատում),
  - բ) ուսանողների կանոնավոր խորհրդատվությունների անցկացում,
  - գ) բակալավրի մասնագետի ծրագրով ավարտական (դիպլոմային) աշխատանքների ղեկավարում,
  - դ) մասնակցություն ուսումնական ստորաբաժանման ուսումնամեթոդական և հետազոտական աշխատանքներին:

## ԴԱՍԱԽՈՍ

- 1) Համալսարանի դասախոսի պաշտոնը կարող են զբաղեցնել անձինք, ովքեր ունեն մագիստրոսի կամ դրան համարժեք որակավորման աստիճան:
- 2) Դասախոսի համար, ըստ պրոֆեսորադասախոսական տարակարգերի, սահմանվում են ուսումնական,

հետազոտական և մեթոդական-կազմակերպչական գործունեության հետևյալ ցուցանիշները.

- ա) գործնական և լաբորատոր պարապմունքների, ուսումնական սեմինարների անցկացում,
- բ) հանրակրթական առարկաների դասավանդում,
- գ) մասնագիտական առարկաներից հաշվեգրաֆիկական, կուրսային աշխատանքների և նախագծերի ղեկավարում,
- դ) ուսումնական և մանկավարժական պրակտիկաների ղեկավարում:

Թափուր պաշտոնների տեղակալումը, որպես կանոն, իրականացվում է մրցույթով: Աշխատանքի ընդունման հավակնորդների թափուր աշխատատեղի պահանջներին նրանց համապատասխանությունը վերջնականապես պարզելու նպատակով, մինչև մրցույթի իրականացումը կամ մինչև աշխատանքի ընդունման մասին ռեկտորի կողմից հրամանը ստորագրելը կամ էլ աշխատանքային պայմանագիրը կնքելը, համալսարանի ռեկտորը կամ նրա կողմից լիազորված անձն անց է կացնում հարցազրույց և (կամ) կիրառվում են գիտելիքների և կարողությունների նախնական ստուգման այլ միջոցներ:

Աշխատանքի անցնելուց առաջ, համալսարանի ռեկտորը կամ նրա կողմից լիազորված անձը, հավակնորդին ծանոթացնում է աշխատանքի պայմաններին, համալսարանի կանոնադրությանը, ՃՇՀԱՀ աշխատողների ներքին կարգապահության կանոններին, ՃՇՀԱՀ համապատասխան պաշտոնի անձնագրին և

աշխատավայրում նրա աշխատանքը կանոնակարգող ներքին այլ իրավական ակտերին:

Համալսարանում աշխատանքի ընդունվելու և աշխատանքային պայմանագիր կնքելու համար հավակնորդը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 89-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը.

- ա) դիմում համալսարանի ռեկտորի անունով,
- բ) անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- գ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
- դ) երկու լուսանկար 3x4 չափսի,

ե) աշխատանքային գրքույկի պատճենը՝ վավերացված հիմնական աշխատանքի վայրում (առկայության դեպքում),

- զ) համառոտ ինքնակենսագրություն,

է) գիտական աստիճանը և գիտական կոչումը հաստատող կամ ասպիրանտուրան ավարտելու մասին կամ մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման մասին փաստաթղթերի պատճենները,

ը) տպագրված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների սահմանված կարգով հաստատված ցուցակը:

### **3.3.3 ՃՇՀԱՀ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացման քաղաքականությունը**

Համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետի՝ բարձրագույն ուսումնական հաստատության և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության աշխատողները պարտավորվում են ոչ պակաս, քան 5 տարին մեկ, սահմանված կարգով անցնել վերապատրաստում կամ որակավորման բարձրացում: Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ուսումնական հաստատությունն ապահովում է աշխատողների մասնագիտական որակի բարձրացման և վերապատրաստման գործընթացները:

ՃՇՀԱՀ-ում գործում է լրացուցիչ կրթության բաժին, որի գործունեության նպատակներից են լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման միջոցով համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի վերապատրաստումը, հմտությունների ու կարողությունների կատարելագործումն ու արդիականացումը, ուսումնամեթոդական, մասնագիտական և եվրոպական չափանիշներին համապատասխան կրթության անընդհատ զարգացումը:

Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացման խնդիրներն են.

- կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման մակարդակի ապահովումը,
- աշխատողների հմտությունների, գիտելիքի և մասնագիտական պատրաստվածության բարձրացումը շարունակական մասնագիտական կրթության իրականացման միջոցով,
- մասնագիտական ոլորտում նորարարական տեխնոլոգիաների կիրառումը,
- ապագա մասնագետների պատրաստման որակի կատարելագործումը,
- կադրերի տեսական գիտելիքների, հմտությունների և պրակտիկ փորձի համադրումը՝ հաշվի առնելով համակարգի կադրերին ներկայացվող պաշտոնական պահանջները, ինչպես նաև ոլորտում ընթացող ռազմավարական բարեփոխումները,
- կադրերի նախասիրություններին և հետաքրքրություններին համապատասխան տեղեկությունների և հմտությունների ձեռքբերումը, արժեքային համակարգի ձևավորումը,
- կադրերի շարունակական կրթական պահանջմունքների բավարարումը,
- կադրերի մրցունակության ապահովումը՝ աշխատանքային (մասնագիտական) կարողությունները և հմտությունները աշխատաշուկային համապատասխանեցնելու և զարգացնելու միջոցով:

Շարունակական մասնագիտական զարգացման բազմաձևությունն ապահովելու համար շարունակական մասնագիտական զարգացումը ներառում է հետևյալ տեսակները.

1. տեսական գիտելիքների զարգացում՝ Հայաստանի Հանրապետությունում կամ այլ պետություններում մասնագիտական դասընթացներին, սեմինարներին, համաժողովներին մասնակցելու միջոցով,
2. գիտական, գիտագործնական գիտաժողովներին և համագումարներին մասնակցելու և (կամ) իրականացնելու միջոցով,
3. գործնական հմտությունների զարգացում՝ աշխատանքային տեղում մասնագիտական կատարելագործման, գիտագործնական միջոցառումներին մասնակցելու և (կամ) իրականացնելու միջոցով,
4. ինքնակրթություն և ինքնազարգացում հեռահար կամ առցանց դասընթացներին մասնակցելու, իրականացնելու, ինչպես նաև գիտական աշխատանքների, աշխատությունների հրատարակելու և գործնական ուսումնասիրությունների արդյունքները ներկայացնելու միջոցով:

Մասնագիտական զարգացման շարունակական գործընթացի անընդհատությունն ապահովվում է հնգամյա շրջափուլով՝ այդ տարիների ընթացքում իրականացված մասնագիտական գործունեության, ինչպես նաև ձեռք

բերված գիտելիքների և մասնագիտական հմտությունների գնահատման հիման վրա:

Աշխատողի շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող ծրագիրը դիտարկվում է որպես աշխատողի լրացուցիչ կրթության բաղադրիչ, ինչպես նաև համալսարանում կրթության որակի կառավարման համակարգի կարևորագույն կառուցամաս:

ՀՀ կրթական շուկայի մրցակցային պայմանները, բարձրագույն կրթության համակարգում կուտակված ու ներկայում ընդլայնվող միջազգային փորձը, գիտական, այդ թվում ՃՇՀԱՀ-ում գործող կրթական բնագավառների տեղեկատվության ծավալների մշտական աճը, բուհում ուսուցանվող դասընթացների անվանացանկի նորացումը և ավելացումը համալսարանի առջև դրել է մի շարք կարևոր խնդիրներ: Դրանցից առավել առանցքայիններն են.

ա/ բուհում դասավանդման որակապես նոր մակարդակի ձեռքբերումը, որն առավելագույնս կհամապատասխանի աշխատանքի շուկայի ժամանակակից պահանջներին, ինչպես նաև վերափոխված ու նորացված ՀՀ իրավական և ուսումնամեթոդական նորմատիվային բազային,

բ/ կրթության հիմնարարության մեծացումը, կրթության ավանդական և ոչ ավանդական (նորարարական) եղանակների, մեթոդների ու միջոցների օպտիմալ զուգակցման հաշվին կրթական գործընթացի ինտենսիվության աստիճանի բարձրացումը,



- գ/ Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը ընդհանուր կրթական տեխնոլոգիաների մեջ,
- դ/ ՃՇՀԱՀ-ում վերը նշված խնդիրների լուծման հիմնական ուղիներից է դասախոսական կազմի որակավորման բարձրացումը և վերապատրաստումը:

## **ԳԼՈՒԽ 4. ՃՇՀԱՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ**

### **4.1 ՃՇՀԱՀ հետադարձ կապի քաղաքականությունը**

#### **Ընդհանուր մոտեցում**

ՃՇՀԱՀ մշտապես խրախուսում և ողջունում է հետադարձ կապը իր բոլոր ներքին և արտաքին շահակիցների հետ, որոնք կարող են արտահայտվել առաջարկությունների, գոհունակության արտահայտման, բողոքների և գանգատների տեսքով: Այս ամենը վերլուծվում և օգտագործվում է որակյալ կրթական ծառայություններ մատուցելու և անընդհատ բարելավում ու զարգացում ապահովելու համար:

Արդյունավետ հետադարձ կապ ապահովելու համար ՃՇՀԱՀ-ն հետևողականորեն կիրառում է հետևյալ մոտեցումները.

- ՃՇՀԱՀ խրախուսում է իր մատուցած ծառայությունների որակի վերաբերյալ իր բոլոր շահակիցների (ներքին և արտաքին) կողմից բողոքների կամ առաջարկությունների ներկայացումը,
- համակարգում է բոլոր անհատական բողոքները և առաջարկությունները, այդ թվում՝ բանավոր բնույթի,

- ապահովում է հետադարձ կապի բոլոր դրսևորումների նախնական մշակումը և, անհրաժեշտության դեպքում, պատշաճ արձագանքումը,
- համալսարանի համապատասխան մակարդակներում և անձնակազմի մասնակցությամբ քննում է իր բոլոր շահակիցներից (ներքին և արտաքին) ստացվող բողոքները և դրանց լուծումներ տալիս,
- իր անձնակազմի շրջանում դրական վերաբերմունք է ձևավորում բոլոր շահակիցների հանդեպ,
- անհրաժեշտության դեպքում հարգում է շահակիցների անանուն մնալու ցանկությունը:

### **Նպատակներ**

ՃՇՀԱՀ հետադարձ կապի մեխանիզմների մշակման և իրականացման նպատակն է.

- ապահովել հետադարձ կապի տարբեր դրսևորումների ժամանակին և անաչառ կառավարումը,
- բարելավել մատուցվող կրթական ծառայությունների որակը,
- համակարգել հետադարձ կապի միջոցով ստացվող տվյալների հավաքագրման գործընթացը, ինչը կարող է նպաստել դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավմանը,

- ճանաչել բարձրագույն կրթության ոլորտում առկա լավագույն փորձը և փնտրել ՃՇՀԱՀ-ում դրա կիրառելիության ուղիները:

## Շրջանակը

Սույն քաղաքականությունը վերաբերում է ՃՇՀԱՀ անձնակազմին՝ առանց որևէ բացառության: Այն ուղղված է ներքին և արտաքին բոլոր շահակիցների հետ արդյունավետ հետադարձ կապի ապահովմանը: Դրանով առաջնորդվում են համալսարանի բոլոր ստորաբաժանումները, ֆակուլտետները և ամբիոնները:

## Սկզբունքները

ՃՇՀԱՀ-ում գործում են հետադարձ կապի ապահովման համապատասխան սկզբունքներ, որոնց պահպանումը պարտադիր է կառավարման բոլոր մակարդակների համար: Դրանք են.

- **հասանելիություն.** ապահովել հետադարձ կապի այնպիսի մեխանիզմներ, որ այդ գործընթացում կարողանան ներգրավվել բոլոր շահակիցները,
- **հաշվետվողականություն.** հետադարձ կապի ապահովման գործընթացների վերաբերյալ պետք է պարբերաբար պատշաճ հաշվետվություններ ներկայացվեն այդ գործընթացում ընդգրկված

համալսարանի համապատասխան մարմինների կողմից,

- **տվյալների հավաքագրում.** հավաքագրել և գրանցել այն տվյալները, որոնք ստացվել են հետադարձ կապի արդյունքում, որպեսզի հնարավոր լինի դրանց հիման վրա վերլուծել մատուցվող ծառայությունների որակը,
- **անաչառություն.** գիտակցել, որ հետադարձ կապի ապահովման գործընթացում, հատկապես բողոքների պարագայում, պետք է ներգրավված բոլոր կողմերի համար պահպանել անաչառությունը,
- **ռեսուրսների բաշխում.** բավարար մակարդակով ապահովել անհրաժեշտ ռեսուրսների բաշխումը, որպեսզի հետադարձ կապի ապահովման գործընթացն իրագործվի պատշաճ կերպով,
- **արագ արձագանքում.** հետադարձ կապի մեխանիզմների միջոցով ստացված տեղեկատվությունն անհրաժեշտ է վերլուծել և օգտագործել առանց անհարկի հետաձգման,
- **վերանայում.** պարբերաբար վերանայել հետադարձ կապի ապահովման մեխանիզմները և ընթացակարգերը,
- **հրապարակայնություն.** ապահովել ՃՇՀԱՀ հետադարձ կապի քաղաքականության և ընթացակարգերի հրապարակայնությունը բոլոր ներքին և արտաքին շահակիցների համար:

## 4.2 ՃՇՀԱՀ-ում գործող հետադարձ կապի մեխանիզմները

ՃՇՀԱՀ հետադարձ կապի մեխանիզմները հիմնված են այն սկզբունքային մոտեցման վրա, որ անկախ արդյունավետությունից, դրանք պետք է լինեն բազմաբնույթ և ապահովեն բոլոր շահակիցների ակտիվ մասնակցությունը հետադարձ կապի ապահովման գործընթացներում: Հետադարձ կապի ապահովման մեկ կամ երկու ուղիների կիրառումը չի կարող ապահովել շահակիցների բոլոր խմբերի ընդգրկվածությունը այդ գործընթացներում: Շատ հաճախ շահակիցները պահանջում են անհատական և յուրահատուկ մոտեցում:

ՃՇՀԱՀ-ի և նրա շահակիցներին միջև հետադարձ կապը կազմակերպվում է հետևյալ մեխանիզմների միջոցով.

- ՃՇՀԱՀ պաշտոնական կայքի միջոցով ([www.nuaca.am](http://www.nuaca.am)),
- համալսարանում կազմակերպվող հանդիպումների միջոցով,
- տարբեր տեսակի հարցումների միջոցով (առցանց, թղթային),
- սեմինար-քննարկումների, աշխատանքային հանդիպումների միջոցով և այլն:

Հետադարձ կապի ապահովման արդյունավետ մեխանիզմ են հանրային հանդիպումները և հարցաթերթերը: Մասնավորապես, անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ կազմակերպել բաց հաշվետվողական հանդիպումներ բոլոր հնարավոր շահակիցների հետ, որտեղ որ հնարավոր է, որ մասնակիցները ներկայացնեն բուհի գործունեության

վերաբերյալ իրենց կարծիքները, բողոքները, դժգոհությունները, վերլուծությունները: Հարցաթերթերը ևս գործուն մեթոդ է՝ ապահովելու համար ստացված կարծիքների քանակական պատկերը: Այստեղ կարևոր է, որ քանակական և որակական տվյալները միմյանց փոխլրացնեն: Պետք է բացառել թվեր առանց շարադրանքի և շարադրանք առանց թվերի բացասական երևույթը: Հատկապես, երբ հետադարձ կապը պետք է օգտագործվի կառավարչական որոշումների ընդունման համար, ապա վերոնշյալ սկզբունքի պահպանումն առաջնային է: Հանրային հանդիպումների և հարցաթերթերի մեթոդները թույլ են տալիս նաև հետագայում, արդյունքների վերլուծությունից հետո, համապատասխան շահակիցներին ընդգրկել ոչ միայն հետադարձ կապի ապահովման գործընթացներում, այլև՝ համալսարանի մասնակցային կառավարման համակարգում:

Համալսարանի համար հետադարձ կապի գործուն մեխանիզմ կարող է լինել ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության արդյունքների հրապարակայնության ապահովումը բոլոր շահակիցների համար: Այս տեսակի աշխատանքի արդյունքները հարկավոր է ներկայացնել ոչ միայն պետական կառավարման լիազոր մարմին՝ հավատարմագրման համար, այլ նաև սեղմ բրոշյուրավորված տարբերակով մատուցել կրթական գործընթացում ներգրավված կողմերին: Մա հնարավորություն է տալիս ինչպես ապահովելու համալսարանի գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը, այնպես էլ հետագայում ստանալու

շահակիցների առավել հիմնավորված կարծիքները համալսարանի գործունեության, ձեռքբերումների և բացթողումների վերաբերյալ:

Չափազանց կարևոր հանգամանք է հետադարձ կապի մեխանիզմների միջոցով ստացված կարծիքներին, վերլուծություններին, բողոքներին մշտապես արձագանքելը: Քանի որ, եթե շահակիցները նկատում են, որ նրանց կողմից արձարծվող հարցերը, այդ թվում նաև բողոքները, անտեսվում են կամ չեն հանգեցնում որոշակի փոփոխությունների, ապա նրանք կորցնում են վստահությունն հետադարձ կապի այդ մեխանիզմի նկատմամբ և դադարում են այն օգտագործել:

Այսպիսով, արդյունավետ հետադարձ կապ ապահովելու համար բուհը պետք է համակարգված գործընթացների միջոցով ուսումնասիրի, վերլուծի և պատասխանի հետադարձ կապի մեխանիզմների միջոցով ստացված արձագանքներին և բողոքներին: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ արդյունավետ հետադարձ կապի ապահովումը, ինչպես ցանկացած այլ գործընթաց, պահանջում է որոշակի ներդրումներ: Խոսքը վերաբերում է, ինչպես ֆինանսական միջոցներին, այնպես էլ ժամանակային ծախսումներին և մարդկանց ներգրավվածությանը: Մասնավորապես, արդյունավետ հետադարձ կապի մեխանիզմ ունենալու և գործարկելու համար նախնառաջ պետք է ապահովել համալսարանի բարձրագույն ղեկավարության ներգրավվածությունը հետադարձ կապի գործընթացներին: Կառավարիչների և



առաջնորդների աջակցությունը առաջնային է համապատասխան ֆինանսական ռեսուրսների ապահովման տեսանկյունից և հետադարձ կապի մեխանիզմների արդյունավետ օգտագործման համար:

Բացի այդ, հարկավոր է համալսարանի կառավարման տարբեր մակարդակներում ունենալ հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմներ կիրառող կառավարիչներ, ովքեր իրենց փորձը կարող են տարածել համալսարանով մեկ: Կարևոր է նաև ապահովել բոլոր ֆակուլտետների համատարած մասնակցությունը հետադարձ կապի գործընթացներին, այլապես ստացված տեղեկատվությունը կարող է մեկուսանալ և սահմանափակվել կոնկրետ խմբի շրջանակներում:

Հետադարձ կապի համակարգը և ընթացակարգերը հաստատելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև մանրուքներին: Արդյունավետ հետադարձ կապի մեխանիզմները պահանջում են կարողությունների հստակ շրջանակ, ինչպիսիք են՝ հարցումների անցկացումը, վերլուծական և հաղորդակցական ունակությունները: Այս առումով, հարկ է ամեն կերպ ամրապնդել և ուժեղացնել անձնակազմի համապատասխան կարողությունները վերապատրաստումների միջոցով: Շահակիցները, ովքեր պետք է հետադարձ կապի գործընթացներում ընդգրկվեն, հաճախ ցանկանում են իմանալ, թե ինչպես է համապատասխան տեղեկատվությունը օգտագործվելու և, թե ումից են ստանալու դրա արձագանքը: Այս առումով համալսարանը տարբեր օղակներում պետք է հստակեցնի,

թե ովքեր են այն պատասխանատուները, որ ժամանակին արձագանքելու են շահակիցներին: Շատ խնդիրներ կան, որոնք համալսարանի վերահսկողության ոլորտից դուրս են և որոնց վերաբերյալ հետադարձ կապի մեխանիզմների միջոցով կարող են տեղեկատվություն կամ արձագանքներ ստացվել: Այս առումով ևս անհրաժեշտ է շահակիցներին տեղեկացնել նմանատիպ խնդիրների և դրանց արձագանքման համակարգի վերաբերյալ:

### **4.3 Հետադարձ կապի ստացումը և օգտագործումը**

Ուսանողներից կամ այլ շահակիցներից հետադարձ կապի մեխանիզմների միջոցով արձագանքներ ստանալիս և դրա հետ կապված գործողություններ կատարելիս ՃՇՀԱՀ-ն պետք է ապահովի հետևյալ սկզբունքների կիրառումը.

- ա/ կիրառվող ընթացակարգերն արդար են, էթիկայի նորմերին համապատասխան, թափանցիկ, պատեհաժամ և հանգեցնում են պատշաճ գործողությունների,
- բ/ հետադարձ կապի ապահովման ընթացքում մարդկանց նկատմամբ վերաբերմունքը հիմնված է հարգանքի, հավասար հնարավորությունների, իսկ անհրաժեշտության դեպքում՝ գաղտնիության վրա,
- գ/ հավաքվող, վերլուծվող և օգտագործվող տեղեկատվությունը ճշգրիտ է, չեզոք և անմիջապես բխում է հետադարձ կապի ապահովման նպատակներից,

- դ/ ստացված տեղեկատվությունը անհրաժեշտաբար օգտագործվում է շարունակական բարելավման համար,
- ե/ հետադարձ կապի արդյունքում իրականացվող գործողություններն իրենց հերթին արձագանքման մեխանիզմի միջոցով հաղորդվում են շահակիցներին:

#### **4.4 Հասարակական պատասխանատվությունը, հրապարակայնությունը և հաշվետվո- ղականությունը՝ որպես որակի ապահովման համակարգի անբաժանելի մաս**

Համալսարանների հրապարակային և հաշվետու գործունեության հենքը ձևավորվել է անտիկ աշխարհի և հետագայում եվրոպական համալսարանների գործունեության հիմնարար սկզբունքներում՝ օժտելով համալսարանները ակադեմիական ազատություններով և ինքնավարությամբ:

Համալսարանների հրապարակային գործունեությունն ուղղորդվում է երկու հիմնարար գաղափարով.

ա/ազատությունները ձևավորում են պարտավորություններ,

բ/ ինքնավարությունը՝ հաշվետվողականություն: Հիմնարար նշանակություն ունի համալսարանների հասարակական պատասխանատվությունը:

Համալսարանների ազատությունների Խարտիան ձևակերպում է նշված հիմնարար սկզբունքը.

Մենք ավելի քան երբևէ պետք է գիտակցենք համալսարանների ստանձնելիք դերը անընդհատ փոփոխվող հասարակությունում: Ժամանակակից աշխարհում կրտսեր սերնդին գիտելիքի փոխանցման համալսարանների առաքելությունը ենթադրում է նաև հասարակական պատասխանատվություն:

Հասարակության մշակութային, հասարակական և տնտեսական զարգացումը, մասնավորապես, պահանջում է նշանակալից ներդրում կրթության շարունակականության գործում:

Համալսարանը հասարակության սրտում աշխարհագրորեն և պատմական տարբեր ժառանգությամբ ձևավորված ինքնավար հաստատություն է, որը ստեղծում, ուսումնասիրում, գնահատում և մշակույթ է փոխանցում գիտահետազոտական աշխատանքների և ուսուցման միջոցով: Համալսարանների հասարակական պատասխանատվությունը իրականացվում է հրապարակայնության և հաշվետվողականության ձևով:

Հրապարակայնությունը և հաշվետվողականությունը նպաստում են.

- կրթության որակի բարձրացմանը,
- որակավորումների ճանաչմանը,
- ուսանողների և դասախոսական կազմի շարժունությունը,

- բուհի գործունեության նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը,
- ներբուհական համերաշխության և վստահության ամրապնդմանը,
- ուսանողների ներգրավվածության բարձրացմանը,
- օտարերկրյա ուսանողների, դասախոսների և հետազոտողների ներգրավմանը բուհում,
- գիտելիքահեն և հետազոտական ուղղվածությամբ կրթության զարգացմանը,
- վիճակագրական տվյալների վերլուծության բարելավմանը,
- արտաքին շահեկիցների ներգրավման ավելացմանը,
- հնարավոր ներդրողների վստահության բարձրացմանը,
- բենչմարքինգի իրականացմանը,
- բուհական հաստատությունների վարկանիշավորմանը,
- կոռուպցիոն ռիսկերի նվազմանը:

Համալսարանների հասարակական պատասխանատվության հիմնարար սկզբունքն իրացվում է արտաքին և ներքին մակարդակներով.

#### I. Արտաքին՝ ազգային և միջազգային.

1. ազգային օրենսդրություն, իրավական ակտեր,
2. ազգային կրթական ռազմավարություններ և զարգացման գերակա ուղղություններ,
3. միջազգային կրթական իրավական ակտեր և զարգացման միտումներ,

4. միջազգային սոցիալ-տնտեսական միջավայրի ազդեցություն:

II. Ներքին՝ բուհական.

1. ուսումնական գործընթաց,
2. գիտահետազոտական աշխատանքներ,
3. ֆինանսատնտեսական ոլորտ,
4. կառավարման համակարգ,
5. միջազգային կապեր,
6. համալսարանի ընդհանուր գործունեություն:

I. *Արտաքին՝ ազգային և միջազգային մակարդակ.* օրենսդրության ոլորտում հրապարակայնությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունն ամրագրված է հիմնականում.

- միջազգային մի շարք փաստաթղթերում, մասնավորապես «ԵՄ 2020» ռազմավարությունում,
- Եվրոմիության բարձրագույն կրթության (այսուհետ ԵՄ ԲԿ) արդիականացման օրակարգի ԵՄ հայտարարագրում,
- Եվրախորհրդի բարձրագույն կրթության ասպարեզի առաջարկություններում ու բանաձևերում, մասնավորապես՝ բուհերի հանրային պատասխանատվության սկզբունքներում,
- Բոլոնիայի գործընթացի սկզբունքներում և առնչվող փաստաթղթերում/ԵԿՓՀ ուղեցույցում և այլն,
- ՅՈՒՆԵՍԿՕ-ի փաստաթղթերում, մասնավորապես կրթական ոլորտների դասակարգչում,
- ՀՀ Սահմանադրությունում,

- «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում,
- ՀՀ ԿԳՆ բարձրագույն կրթության գերակա ուղղություններում,
- ՀՀ ազգային վիճակագրության ծառայության պահանջներով:

II. **Ներքին՝ բուհական մակարդակ.** ուսումնական գործընթացի հրապարակայնությունը ներառում է տեղեկատվություն.

1. Ուսումնական գործընթացի մասին՝

- ուսումնական ծրագրեր,
- դասավանդում,
- գնահատում,
- ուսումնական գործունեության կազմակերպում,
- դասախոսական կազմ,
- ուսումնառության պայմաններ:

2. Գիտահետազոտական աշխատանքների մասին՝

- իրականացվող ուղղություններ,
- դրամաշնորհներ,
- հետազոտողների տվյալներ և այլն:

3. Ֆինանսատնտեսական ոլորտի մասին՝

- հիմնադրամի հաշվետվողականության կարգ (հավելյալ տեղեկատվության տրամադրում հասարակայնությանը):

4. Կառավարման համակարգի մասին՝

- կառավարման համակարգին առնչվող բոլոր որոշումների, կազմակերպական կառուցվածքի փոփոխությունների և ռազմավարական կառավարման առնչվող բոլոր հարցերի մասին բաց տեղեկատվության հրապարակում:

5. Միջազգային կապերի մասին՝

- տեղեկատվություն միջազգային կապերի, օտարերկրյա ուսանողների, օտար լեզվով բուհի գործունեության բոլոր ոլորտների մասին,
- բաց, մատչելի և ամբողջական տեղեկատվության տրամադրում ազգային և միջազգային բոլոր շահեկիցներին,
- տեղեկատվություն պայմանագրերի, բանակցությունների, նախատեսվող, մշակվող և ընթացիկ ծրագրերի մասին,
- վիճակագրական տվյալների տրամադրում օտարերկրյա ուսանողների, դասախոսների և հետազոտողների մասին:

6. Համալսարանի ընդհանուր գործունեության մասին՝



- բուհական, ուսանողական հավելյալ ծառայությունների, բուհի գործունեությանն առնչվող տեղեկատվական, վիճա-կագրական տվյալների, վերլուծություն-ների, հաշվետվությունների հրապարակում:

Բուհի գործունեության հրապարակայնությունը և հաշվետվողականությունը պետք է ապահովվեն հետևյալ սկզբունքներով.

- անաչառություն,
- հավաստիություն,
- ամբողջականություն,
- թափանցիկություն,
- հասանելիություն:

ՃՇՀԱՀ-ն շահառուների և շահեկիցների համար պետք է ապահովի տրվող տեղեկատվության մատչելիությունը, ճշգրտությունը և կարևորությունը: ՃՇՀԱՀ-ն պետք է կանոնակարգի նաև տեղեկատվության մշակման, փոխանցման, հաստատման և կիրառման գործընթացները:

## ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որակ – բազմակողմ կատեգորիա, որն առնչվում է ինստիտուցիոնալ առաքելությանն ու նպատակներին, ինչպես նաև ընդունված չափորոշիչներին՝ տվյալ բուհի, ծրագրի կամ դասընթացի շրջանակներում: Կախված օգտագործման նպատակից՝ տարբերում են որակի տարբեր սահմանումներ՝ որակը որպես գերազանցություն, որակը որպես համապատասխանություն նպատակին, որակը որպես բարելավում և այլն:

Որակի ապահովում - բուհի կամ կրթական ծրագրի որակի գնահատման, վերահսկման, պահպանման և բարելավման շարունակական գործընթաց:

Որակի կառավարում - որակի բարելավման նպատակով բուհի կամ կրթական ծրագրի մակարդակում կանոնավոր իրականացվող միջոցառումների համակցություն:

Որակի վերահսկում – բուհի կամ կրթական ծրագրի որակի ստուգման ներքին կամ արտաքին գործընթաց:

Որակի բարելավում – որակի կառավարման միջոցով որակի շարունակական բարձրացման գործընթաց:

Որակի մշակույթ – որակի համընդունելի և ինտեգրված սկզբունքների համակարգ, որը բնորոշ է բուհի կազմակերպական մշակույթին կամ կառավարման համակարգին:

Որակի ապահովման Եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ – Որակի ապահովման Եվրոպական ասոցիացիայի (ENQA) կողմից մշակված և 2005թ. Բերգենի գագաթաժողովում ընդունված համաեվրոպական պաշտոնական փաստաթուղթ, որը ներառում է համապատասխան չափորոշիչներ և ուղենիշներ՝ բուհերում որակի ներքին ու արտաքին ապահովման, ինչպես նաև որակի ապահովման գործակալությունների համար:

Որակի ներքին ապահովման համակարգ – կառավարման համակարգ, որը սահմանված ընթացակարգերի և մեխանիզմների օգնությամբ իրագործում է բուհի որակի ապահովման քաղաքականությունն ու խնդիրները:

Որակի փորձաքննություն – բուհի կամ կրթական ծրագրի որակի արտաքին գնահատման (ուսումնասիրման) փաստական գործընթաց:

Գնահատում – բուհի կամ ծրագրի որակի համակարգված և քննախույզ վերլուծության գործընթաց, որը հանգում է բուհի կամ ծրագրի վերաբերյալ եզրակացությունների և/կամ երաշխավորությունների:

Ինքնավերլուծություն/ինքնագնահատում – բուհի ինստիտուցիոնալ և ծրագրային կարողությունների գնահատման վերլուծական գործընթաց, որի արդյունքներն ամփոփվում են ինքնավերլուծության/ ինքնագնահատման զեկույցում:

Արտաքին գնահատում – գործընթաց, որով հավատարմագրող կազմակերպությունը հավաքում է տվյալներ, տեղեկատվություն և վկայություններ բուհի, նրա առանձին միավորի կամ կրթական ծրագրի մասին՝ նրա որակի վերաբերյալ եզրակացություն կազմելու համար: Այն բաղկացած է երեք մեկը մյուսին հաջորդող փուլերից՝ ինքնագնահատում և համապատասխան զեկույցի կազմում, փորձագետների ստուգայց և գնահատում, գնահատման զեկույցի կազմում:

Փորձագիտական գնահատում – բուհի կամ կրթական ծրագրի որակի և արդյունավետության, կադրային, ռեսուրսային ապահովվածության վերաբերյալ արտաքին

փորձագետների կողմից իրականացվող գնահատման գործընթաց:

Հավատարմագրում – գործընթաց, որով պետական (կամ հասարակական) հավատարմագրող կառույցը գնահատում է բուհի կամ կրթական ծրագրի որակը՝ նախանշված նվազագույն չափանիշներին կամ չափորոշիչներին դրանց համապատասխանությունը պաշտոնապես ճանաչելու համար:

Չափանիշներ – մակարդակի էտալոնային կողմնորոշիչներ, որոնք բնութագրում են որոշակի խնդիրների և/կամ չափորոշիչի իրագործման աստիճանը:

Չափորոշիչներ – պահանջների և պայմանների ակնկալվող մակարդակների վերաբերյալ ձևակերպումներ, որոնց համեմատությամբ պետք է գնահատվի և ձեռք բերվի բուհի կամ կրթական ծրագրի անհրաժեշտ որակը՝ հավատարմագրվելու կամ լիցենզավորվելու համար:

Ոսումնառության արդյունք – ուսումնառության արդյունքն այն գիտելիքը, հմտություններն ու կարողություններն են, որոնք ուսանողը պետք է ունենա և կարողանա դրսևորել դասընթացի կամ կրթական ծրագրի

ավարտին: Ուսումնառության ակնկալվող արդյունքը սահմանում է, թե կրթական գործընթացի ավարտին ուսանողն ինչ պետք է իմանա, հասկանա և կարողանա ցուցաբերել:

Ձեռքբերված ուսումնառության արդյունքներ – ցույց են տալիս, թե, ուսումնառության ակնկալվող արդյունքի համեմատ, ինչ են ձեռք բերել ուսանողները դասընթացի կամ կրթական ծրագրի ավարտին:

Որակավորման նկարագրիչներ – ձևակերպումներ, որոնք սահմանում են որակավորումների վերջնարդյունքները բարձրագույն կրթության համապատասխան մակարդակներում և բնութագրում են դրանց միջև հիմնական տարբերությունները:

Ծրագրի մշակման արտոնում – գործընթաց, որի արդյունքում ուսումնական ստորաբաժանումը ստանում է բուհի պաշտոնական համաձայնությունը՝ ըստ ներկայացրած հայտի նոր կրթական ծրագրի մշակման համար:

Ծրագրի հաստատում – գործընթաց, որով բուհը գնահատում է նոր կրթական ծրագրի մշակման որակը և

ծրագրային թիմի սահմանված ստանդարտներին համապատասխան այն իրականացնելու կարողությունը:

Ծրագրի պարբերական վերանայում – գործընթաց, որով բուհը, կրթական ծրագրի իրականացման լրիվ ցիկլի արդյունքներով, գնահատում է ծրագրի չափորոշիչների ու նպատակների ձեռքբերումը և փաստական մատուցման որակը և որոշում է ընդունում ծրագրի շարունակման նպատակահարմարության կամ ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Ծրագրի մշտադիտարկում – գործընթաց, որը դիտարկում է ծրագրի արդյունավետությունը՝ սահմանված նպատակներին և ակնկալվող կրթական վերջնարդյունքներին հասնելու տեսանկյունից և բացահայտում է ուսման որակի հետ կապված խնդիրները, որպեսզի ապահովի բարելավմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկումն ու լավագույն փորձի տարածումը:

Կրթական ծրագրի պրոֆիլ – ծրագրի իրականացման արդյունքում շնորհվող որակավորման տարբերիչ հայտանիշների նկարագրություն՝ հիմնված նրա առանձնահատուկ նպատակների վրա, որը ցույց է տալիս,

թե ինչպես է տվյալ որակավորումը հարաբերվում որակավորումների ընդունված շրջանակին և աշխատանքային միջավայրին:

Որակավորումների ազգային շրջանակ – որակավորումների համապարփակ հենք, որը սահմանում է երկրում ճանաչված բարձրագույն կրթության բոլոր որակավորումները՝ աշխատաձավալի, մակարդակի, կրթական վերջնարդյունքների և այլ բնութագրերի միջոցով:

Որակավորումների եվրոպական շրջանակ – որակավորումների համակապակցող հենք, որը թափանցիկ է դարձնում հարաբերակցությունը եվրոպական երկրների որակավորումների միջև և ծառայում է որպես որակավորումների տարբեր ազգային շրջանակների փոխկապակցման մեխանիզմ:



## ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

### *Օրենքներ*

1. «Հայաստանի Հանրապետության օրենքը Կրթության մասին» / ընդունվել է 14.04.1999/
2. «Հայաստանի Հանրապետության օրենքը Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» /Ընդունվել է 14.12.2004/
3. «Հայաստանի Հանրապետության օրենքը նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» /ընդունվել է 08.07.2005/

### *Որոշումներ*

1. Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 7-ի N 372 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշում /30 հունիսի 2011 թվականի N 978-ն/:
2. Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները

հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում /  
30 հունիսի 2011թվականի N 959-ն/:

3. Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչները հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում /16 հունվարի 2001 թվականի N 24/:
4. Բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթության պետական կրթական չափորոշիչների ձեւավորման և հաստատման կարգը հաստատելու մասին հայաստանի հանրապետության կառավարության որոշում /14 ապրիլի 2005 թվականի N 449-ն/:
5. Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում /23 հունիսի 2005 թվականի N 975-ն/:
6. Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում /22 դեկտեմբերի 2005 թվականի N 2307-ն/:
7. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու,

Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում /12 հունվարի 2006 թվականի N 73-ն/:

8. Առնվազը հիմնական ընդհանուր կրթության հիմք չպահանջող նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում /3 օգոստոսի 2006 թվականի N 1151-ն/:
9. Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 9-ի N 1933-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում /30 օգոստոսի 2007 թվականի N 1038-ն/:
10. Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունիսի 15-ի N 320 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում /23 նոյեմբերի 2007 թվականի N 1412-ն/:

11. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ ստեղծելու, մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու, նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական կրթության գծով հավատարմագրման փորձաքննություն իրականացնելու լիազորություն տալու և Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 20-ի N 1540-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը գումար հատկացնելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում /27 նոյեմբերի 2008, 1486 - ն/:
12. Հայաստանի Հանրապետությունում կրթական ծրագրերի իրականացման (բացառությամբ բժշկական միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի) լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 7-ի N 372 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարություն որոշում /9 հուլիսի 2009 թվականի N 808-ն/:

## *Էլեկտրոնային կայքեր*

1. ՀՀ կառավարություն <http://www.gov.am/en/>
2. ՀՀ կրթության և գիտության նախարարություն  
<http://edu.am/>
3. Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ  
<http://www.cfep.am/>
4. Մասնագիտական կրթության որակի ապահովման  
ազգային կենտրոն հիմնադրամ <http://www.anqa.am>
5. Որակի ապահովման գործակալությունների  
միջազգային ցանց  
(INQAAHE) <http://www.inqaah.org/>
6. Մասնագիտական կրթության որակի ապահովման  
Եվրոպական ասոցիացիա (ENQA) <http://enqa.eu/>
7. ԵՄ կրթության, տեսաձայնային և մշակութային  
գործակալություն  
[http://eacea.ec.europa.eu/index\\_en.php](http://eacea.ec.europa.eu/index_en.php)
8. Եվրախորհուրդ <http://hub.coe.int/web/coe-portal>
9. Բոլոնիայի գործընթացի քարտուղարություն  
<http://www.ehea.info/>
10. Եվրոպական համալսարանների ասոցիացիա (EUA)  
<http://www.eua.be/Home.aspx>
11. Եվրոպայի ուսանողական միություն(ESU)  
<http://www.esu-online.org/>
12. ՅՈՒՆԵՍԿՕ <http://en.unesco.org/>
13. Համաշխարհային բանկ <http://www.worldbank.org/>
14. Շարունակական կրթության դիտակետ  
<http://www.lifelonglearning-observatory.eu/>

15. Եվրոպայի տնտեսական համագործակցության և  
զարգացման կազմակերպություն  
<http://www.oecd.org/index.htm>
16. Եվրոպայի կրթական համակարգերի  
կառուցվածքների և քաղաքականությունների ցանց  
[http://eacea.ec.europa.eu/education/eurydice/index\\_en.ph  
p](http://eacea.ec.europa.eu/education/eurydice/index_en.php)
17. ENIC-NARIC <http://www.enic-naric.net/>
18. Ակադեմիական փոխճանաչման և շարժունության  
ազգային տեղեկատվական կենտրոն  
<http://www.armenic.am/>
19. Tuning <http://www.unideusto.org/tuning/>
20. Համալսարանների միջազգային ասոցիացիա  
<http://www.iau-aiu.net/>
21. Բարձրագույն կրթության քաղաքականության  
հետազոտությունների կենտրոն (CHEPS)  
<http://www.utwente.nl/mb/cheps/>

## Հավելված 1. Դասալսումների անցկացման ընթացակարգը

### ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

#### ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

##### 1. Դասալսումների անցկացման նպատակը

ՃՀՀԱՀ կրթական ծրագրերում ընդգրկված դասընթացների դասալսումների անցկացման նպատակն է.

- դիտարկել դասի կազմակերպման և անցկացման գործընթացը,
- կատարված դիտարկումների և ամփոփումների հիման վրա՝ մշակել և իրականացնել ուսումնառության և դասավանդման որակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

##### 2. Աշխատանքային խմբերի ձևավորում

Կրթության որակի ապահովման կենտրոնը (այսուհետև՝ Որակի կենտրոն) յուրաքանչյուր դասալսում անցկացնելու նպատակով ձևավորում է 3 հոգուց բաղկացած աշխատանքային խումբ, որի կազմում ներգրավվում են.

- որակի կենտրոնի ներկայացուցիչ (անձնակազմի անդամ կամ որակի կենտրոնի պատասխանատու),
- կրթական ծրագրերի և ուսումնամեթոդական վարչության ներկայացուցիչ,
- ESPAQ Tempus ծրագրի շրջանակներում կրթության որակի գծով վերապատրաստված ուսանող:

Աշխատանքային խմբի կազմը փոփոխական է: Այն ձևավորվում է յուրաքանչյուր դասալսման համար առանձին՝ դասալսում անցկացնելուց առնվազն մեկ շաբաթ առաջ:

Աշխատանքային խմբում կարող են ներգրավվել միայն Որակի կենտրոնի կողմից անցկացված վերապատրաստում անցած աշխատակիցները, ովքեր իրազեկվել են դասալսման նպատակների, դասալսումն անցկացնողին ներկայացվող պահանջների, նրա գործառույթների, վարքագծի և կարողությունների վերաբերյալ:

##### 3. Դասալսումների անցկացման ժամանակացույց

Դասալսումների գործընթացը իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական տարում առնվազն մեկ անգամ:

Ուսումնական տարվա սկզբին Որակի կենտրոնի անձնակազմը՝ ֆակուլտետների ղեկանների հետ համտեղ, կազմում է այն դասընթացների ցանկը, որոնց դասալսումները պետք է կազմակերպվեն ընթացիկ տարում:

Ցուցակում ներառված դասընթացների դասալսումների անցկացման մասին նախապես իրազեկվում են համապատասխան ամբիոնների վարիչները և պրոֆեսորադասախոսական կազմը: Դասալսումների անցկացման ժամանակացույցը նախապես համաձայնեցվում է գործընթացում ներգրավված կողմերի հետ:

##### 4. Դասալսումների «Գնահատման մատրիցա»

Աշխատանքային խմբի անդամները դասալսումից ստացած դիտարկումների արդյունքները լրացնում են Հավելված 1-ում բերված «Գնահատման մատրիցա»-յում:

5. Դասալսումների արդյունքների ամփոփում և քննարկում

Յուրաքանչյուր դասալսման արդյունքները նախատեսված են ծառայողական օգտագործման համար և ենթակա չեն հրապարակային քննարկման կամ հրատարակման:

Դասալսումներից ստացված արդյունքներն ամփոփվում և ներկայացվում են հաշվետվության (զեկուցագրի) տեսքով՝ ուսումնական տարվա վերջում, որի քննարկումն անց է կացվում կողմերի միջև համաձայնեցված ձևաչափով:

Դասալսման «Գնահատման մատրիցա»

Դասալսման ամսաթիվ « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 \_\_\_\_\_

Առարկայի անվանում \_\_\_\_\_

Դասախոսի անուն, ազգանուն \_\_\_\_\_

Ֆակուլտետ \_\_\_\_\_

Ամբիոն \_\_\_\_\_

Խումբ \_\_\_\_\_

*Դասալսումը անցկացնողի մասին տվյալներ.*

Անուն, ազգանուն \_\_\_\_\_

Գիտական աստիճան, կոչում \_\_\_\_\_

Դասալսում իրականացնողը հանդիսանում է.

\_\_\_\_\_ որակի կենտրոնի աշխատակից

\_\_\_\_\_ որակի կենտրոնի պատասխանատու

\_\_\_\_\_ կրթական ծրագրերի և ուսումնամեթոդական վարչության աշխատակից

\_\_\_\_\_ դեկանատի աշխատակից

\_\_\_\_\_ ուսանող

\_\_\_\_\_ այլ



Ստորև բերված «Գնահատման մատրիցայում» կատարեք թվարկված չափորոշիչներին դասի կազմակերպման համապատասխանության գնահատումը՝ հետևյալ սանդղակի կիրառմամբ.

- ( 1 ) - լիովին չի համապատասխանում
- ( 2 ) - չի համապատասխանում սուբյեկտիվ պատճառներով
- ( 3 ) - չի համապատասխանում օբյեկտիվ պատճառներով
- ( 4 ) - համապատասխանում է՝ որոշ վերապահումով
- ( 5 ) - լիովին համապատասխանում է

h/h	Չափանիշ	Գնահատման միավոր				
		(1)	(2)	(3)	(4)	(5)
1.	Դասի սկզբին դասախոսը հստակ ներկայացնում է տվյալ թեմայի (նյութի, հարցերի) համար հատկացված ժամանակահատվածում իրականացվելիք պլանը, ներկայացվող թեմայի (նյութի, հարցերի) նպատակը և ակնկալվող արդյունքները:					
2.	Դասախոսը ներկայացնում է թեմայի կիրառելիությունը գործնականում:					
3.	Դասախոսը ներկայացնում է նյութը ուսանողի համար պարզ և ընկալելի լեզվով:					
4.	Դասը զուգակցվում է երկխոսություններով, քննարկումներով, ուսանողների հարցերով և միջամտություններով:					
5.	Նյութն ավելի մասշտաբի դարձնելու նպատակով կիրառվում են լրացուցիչ միջոցներ (տեխնիկական, համակարգչային, խաղարկային, ցուցադրական և այլ):					
6.	Դասախոսի պահվածքը ուսանողների նկատմամբ բարյացակամ և տրամադրող է:					
7.	Ուսանողների նկատմամբ դասախոսը դրսևորում է անհատական մոտեցում:					
8.	Դասախոսն ապահովում է ուսանողների հավասարաչափ ներգրավվածությունը քննարկումներին:					
9.	Դասախոսը կիրառում է համապատասխան գործիքակազմ ուսանողի կողմից նյութի յուրացման աստիճանը պարզելու նպատակով:					
10.	Դասախոսը կատարում է ուսանողների հաճախելիության հաշվառում:					

*Գնահատման հետ կապված մեկնաբանություններ (ենթակա է պարտադիր լրացման)*

---



---



---



---



---



---

---

---

---

---

---

*Առաջարկություններ*

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

Գնահատող՝

---

/ստորագրություն/

**Հավելված 2. Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման կարիքների վերհանման հարցաթերթ**

**Հարցաթերթ`**

**համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստման կարիքների վերհանման**

1. Տարիքը`  1 մինչև 35 տարեկան  2 36-45 տարեկան  
 3 46-63 տարեկան  4 63 տ-ից բարձր
2. Սեռը`  1 իգական  2 արական
3. Խնդրում ենք նշել Ձեր զբաղվածությունը, որպես դասավանդող`  
 1 լրիվ դրույք  2 կես դրույք  
 3 Ժամավճար  4 Այլ, նշել \_\_\_\_\_
4. Ձեր գիտական կոչումը` \_\_\_\_\_ (դասախոս, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր)
5. Ձեր գիտական աստիճանը` \_\_\_\_\_ (գիտությունների թեկնածու, դոկտոր)
6. Արդյո՞ք կարող եք օտար լեզվով դասավանդել:  
 1 Այո  2 Ոչ  
Եթե այո, ապա խնդրում ենք նշել այն օտար լեզուները, որոնցով կարող եք դասավանդել`  
 1 Ռուսերեն  2 Անգլերեն  3 Այլ, նշել \_\_\_\_\_
7. Արդյո՞ք օտար լեզվի բարելավման համար վերապատրաստման կարիք եք զգո՞ւմ:  
 1 Այո  2 Ոչ  
Եթե այո, ապա խնդրում ենք նշել լեզուները  
 1 Ռուսերեն  2 Անգլերեն  3 Այլ, նշել \_\_\_\_\_
8. Ներկա` 2017-2018 ուսումնական տարվա ընթացքում որ կրթական աստիճաններում եք դասավանդում:  
 1 Բակալավրիատ  2 Մագիստրատուրա  3  
Ասպիրանտուրա
9. Արդյո՞ք Ձեր ունեցած համակարգչային հմտությունները բավարար են Ձեր աշխատանքային գործունեության կազմակերպման համար:  
 1 Այո \_\_\_\_\_  2 Ոչ \_\_\_\_\_
10. Կցանկանալի՞ք մասնակցել համակարգչային հմտությունների բարելավմանն ուղղված վերապատրաստման դասընթացների  
 1 Այո, հետևյալ ուղղություններով \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
 2 Ոչ

11. Կցանկանայի՞ք դասավանդման ժամանակակից մեթոդների վերաբերյալ վերապատրաստման դասընթացի մասնակցել

1 Այո  2 Ոչ

12. Արդյո՞ք կրթական ծրագրի մշակման փորձ ունեք:

1 Այո  2 Ոչ

Կցանկանայի՞ք մասնակցել կրթական ծրագրերի և վերջնարդյունքների մշակման վերապատրաստման հավելյալ դասընթացի:

1 Այո \_\_\_\_\_  2 Ոչ \_\_\_\_\_

13. Ընդհանուր առմամբ Ձեր գործունեության բարելավման համար ինչպիսի վերապատրաստումների կարիք ունեք

1. \_\_\_\_\_
2. \_\_\_\_\_
3. \_\_\_\_\_
4. \_\_\_\_\_

**Հավելված 3. ԲՈՒՀ նոր ընդունված ուսանողների հարցման հարցաթերթ**

**Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան**

**Հարցաթերթ**

**Բակալավրիատի առաջին կուրսի ուսանողի հարցման**

- *Հարգելի՛ ուսանող, բարի գալուստ ՃՀՀԱՀ, խնդրում ենք լրացնել հարցաթերթիկը՝ պարզելու համար համալսարանից Ձեր ունեցած ակնկալիքները: Այդպիսով Դուք կնպաստեք համալսարանի գիտակրթական և օժանդակ գործընթացների բարեփոխմանը:*

14. Ծննդյան տարեթիվ՝ \_\_\_\_\_ թ. 2. Սեռ՝  արական  իգական
3. Քաղաքացիություն՝  ՀՀ  ԼՂՀ  Այլ, նշել \_\_\_\_\_
4. Մշտական բնակության վայր (քաղաք, մարզ, երկիր) \_\_\_\_\_
5. Ո՞ր թվականին եք ավարտել ավագ դպրոցը (քոլեջը) \_\_\_\_\_ թ.
6. Ո՞րտեղ եք սովորել մինչև բուհ ընդունվելը \_\_\_\_\_
7. Ո՞րն է ձեր մայրենի լեզուն  
 Հայերեն  Ռուսերեն  Անգլերեն  Այլ, նշել \_\_\_\_\_
8. Մահուն կերպով ի՞նչ օտար լեզուների եք սիրապետում  
 Ռուսերեն  Անգլերեն  Այլ, նշել \_\_\_\_\_
9. Ավագ դպրոցում Դուք սովորել եք.  
 Գերազանց  Լավ  Բավարար
10. Դպրոցում սովորելուն զուգընթաց, հաճախե՞լ եք որևէ արվեստի կամ արհեստակցական խմբակի  
 Սպորտ  Երգ/երաժշտություն  Պար  Արվեստ (նշել \_\_\_\_\_)  
 Աշակերտական խորհուրդ  Այլ, նշել \_\_\_\_\_
11. Եթե այո՛, ապա ինչ հաջողություններ եք ունեցել  
Նշել \_\_\_\_\_
12. Համալսարան ընդունվելու համար, պարապե՞լ եք կրկնուսույցի հետ  
 Այո՛  Ո՛չ
13. Համալսարան ընդունվելու համար մասնակցե՞լ եք համալսարանի նախապատրաստական դասընթացներին  Այո՛  Ո՛չ
14. Եթե այո՛, քանի՞ շաբաթ \_\_\_\_\_
15. Մեր համալսարանից բացի, քանի՞ այլ համալսարան եք դիմել ընդունվելու համար \_\_\_\_\_
16. Մեր համալսարանը Ձեր ո՞րերորդ ընտրությունն էր \_\_\_\_\_
17. Ինչպես եք ընտրել այս բուհը  
 Ծնողների խորհրդով  ընկերների խորհրդով  այլ, նշել \_\_\_\_\_
18. Ինչու եք ընտրել Ձեր մասնագիտությունը.  
 Ցանկանում եմ այս ոլորտի մասնագետ դառնալ  
 Այս մասնագիտության համար ուսման վարձը հասանելի է  
 Այս մասնագիտությամբ լավագույն կրթությունը տալիս է այս համալսարանը  
 Ճանաչում եմ մարդկանց, ովքեր հաջողության են հասել այս մասնագիտության շնորհիվ  
 այլ, նշել \_\_\_\_\_
19. Որո՞նք են այն հիմնական 3 գիտելիքները, հմտություններ/կարողությունները, որ դուք կցանկանաք ձեռք բերել համալսարանում, ձեր ընտրած ոլորտում մասնագիտանալու համար.  
 \_\_\_\_\_  \_\_\_\_\_  \_\_\_\_\_

20. Ինչքան՞ վ էք պատրաստ համալսարանում սովորելուն՝ հետևյալ կարողությունների առումով  
(1-ը լիովին պատրաստված եք, 3-ը՝ բոլորովին պատրաստված չեք)

1	Արտահայտվելու և ներկայանալու կարողություն	(1)	(2)	(3)
2	Մտքերի գրավոր շարադրման կարողություն	(1)	(2)	(3)
3	Տեղեկատվության վերլուծության կարողություն	(1)	(2)	(3)
4	Թիմային աշխատանքի կարողություն	(1)	(2)	(3)
5	Թիմակիցներին առաջնորդելու կարողություն	(1)	(2)	(3)
6	Օտար լեզվով խոսելու և գրելու կարողություն	(1)	(2)	(3)
7	Համակարգչային կարողություններ	(1)	(2)	(3)

21. Ձեր ուսման վարձը վճարելու են.

1 Ընդունվել եմ պետ. պատվերի շրջանակում  2 Ծնողներ \_\_\_\_\_ %

3 Այլ ազգականներ \_\_\_\_\_ %  4 Նվիրատվություն \_\_\_\_\_ %  5 Կրթական վարկ \_\_\_\_\_ %

6 Այլ աղբյուրներ, նշել \_\_\_\_\_, \_\_\_\_\_ %

22. Որտեղ եք պատրաստվում ապրել ուսումնառության ընթացքում:

(օր. ծնողների հետ, առանձին վարձակալած բնակարանում, բարեկամների հետ, և այլն)

23. Ինչպես կգնահատեք ընդունող հանձնաժողովի աշխատանքը

1 Դրական  2 Բացասական  3 Չեմ կարող ասել

24. Արդյոք ունեցաք որոշակի դժվարություններ համալսարանում փաստաթղթերը ներկայացնելիս:

1 այո  2 ոչ

25. Եթե այո, ապա խնդրում ենք մանրամասնել

26. Ձեզ համար ինչքան՞ վ է կարևոր, որ համալսարանը մատուցի բարձրորակ ծառայություններ հետևյալ ոլորտներում, ինչպես նաև ապահովի Ձեր առօրյայի կազմակերպումը.

Հ/Հ		Շատ կարևոր է	Կարևոր է	Կարևոր չէ	Բոլորովին կարևոր չէ
1	Խորհրդատվություն՝ գիտակրթական, անձնական և կարիերայի զարգացման հարցերում	(1)	(2)	(3)	(4)
2	Ֆինանսական աջակցություն	(1)	(2)	(3)	(4)
3	Կրթաթոշակների տրամադրում	(1)	(2)	(3)	(4)
4	Ուսանողների աշխատանք համալսարանում	(1)	(2)	(3)	(4)
5	Համակարգչային ծրագրերի ուսուցում	(1)	(2)	(3)	(4)
6	Համացանց, Էլ. փոստ և էլ. ուսուցում (Moodle)	(1)	(2)	(3)	(4)
7	Օտար լեզվի ուսուցում	(1)	(2)	(3)	(4)
8	Գրադարան	(1)	(2)	(3)	(4)
9	Մշակութային, մարզական և այլ խմբակների կազմակերպում, միջոցառումների իրականացում	(1)	(2)	(3)	(4)
10	Իրավաբանական խորհրդատվություն	(1)	(2)	(3)	(4)
11	Առողջապահական և հոգեբանի ծառայություններ	(1)	(2)	(3)	(4)

27. Կցանկանկանայի՞ք մասնակցել ուսանողական խորհրդի աշխատանքներին և ինչպես

---



---



---

**Հավելված 4. Ուսանողների դասընթացներից բավարարվածության վերաբերյալ հարցաթերթ**

**Հարցաթերթ**

**ուսանողի կողմից դասընթացի գնահատման**

- *Լրացվում է յուրաքանչյուր ուսանողի կողմից, ամեն դասընթացի ավարտին,*
- *Խնդրում ենք տրամադրել ձեր անկեղծ կարծիքը, որը կօգնի բարելավել դասընթացի և դրա մատուցման մեթոդների որակը,*
- *Երաշխավորում ենք տրամադրված տվյալների գաղտնիությունը:*

B. Ֆակուլտետ՝ \_\_\_\_\_

E. Կիսամյակ՝ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

F. Դասընթացի անվանում՝ \_\_\_\_\_

C. Կուրս, խումբ՝ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

D. Մագիստրատուրա , Բակալավրիատ

G. Դասախոս՝ \_\_\_\_\_

H. Մեռ՝ արական  իգական

I. Տարիք՝ մինչև 20 տ.  21-25 տ.

25տ.-ից բարձր

***Ամեն հարցի համար ընտրեք մեկ պատասխան՝ ներառելով այն շրջանակի մեջ:***

1. Ինչպիսի՞ն է Ձեր ընդհանուր գնահատականը դասընթացի վերաբերյալ (գնահատեք չորս-բալանոց սանդղակով՝ 1-շատ վատ, 2-վատ, 3 –լավ, 4 –գերազանց, 0 – չեմ կարող գնահատել):

1.	2.	3.	4.	0.
----	----	----	----	----

2. Դասընթացը կարևորում եմ իմ մասնագիտական զարգացման՝ անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ձեռքբերման տեսանկյունից:

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ, քան՝ այո	3 ավելի շատ այո, քան՝ ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	-----------------------------	-----------------------------	--------------------	-------------------------

3. Դասընթացի նպատակները և վերջնարդյունքները հստակ էին և ես ի սկզբանե տեղեկացվել էի դրանց մասին:

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ, քան՝ այո	3 ավելի շատ այո, քան՝ ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	-----------------------------	-----------------------------	--------------------	-------------------------

4. Ուսուցման մեթոդները՝ դասախոսությունները, գործնական պարապմունքները, առաջադրանքները խթանում էին ակնկալվող գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը:

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ, քան՝ այո	3 ավելի շատ այո, քան՝ ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	-----------------------------	-----------------------------	--------------------	-------------------------

5. Դասախոսությունների և գործնական պարապմունքների հարաբերակցությունը ճիշտ էր կազմակերպված :

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ, քան՝ այո	3 ավելի շատ այո, քան՝ ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	-----------------------------	-----------------------------	--------------------	-------------------------

6. Համալսարանում ստեղծված պայմանները (լսարանների, լաբորատորիաների որակը և տեխնիկական զինվածությունը, գրադարանի մատչելիությունը և այլն) բավարար էին բարձրորակ գիտելիքներ ձեռք բերելու համար

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ, քան՝ այո	3 ավելի շատ այո, քան՝ ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	-----------------------------	-----------------------------	--------------------	-------------------------

7. Գործնական և լաբորատոր պարապմունքները նպաստեցին ձեռք բերված տեսական գիտելիքների ամրապնդմանը:

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ, քան՝ այո	3 ավելի շատ այո, քան՝ ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	-----------------------------	-----------------------------	--------------------	-------------------------

8. Քննությանը նախապատրաստվելու համար նախատեսված նյութերը համապատասխան էին և հասանելի:

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ, քան՝ այո	3 ավելի շատ այո, քան՝ ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	-----------------------------	-----------------------------	--------------------	-------------------------

9. Դասախոսը քաջալերում էր ուսանողների հետ ազատ հաղորդակցությունը, քննարկումները և բանավեճերը:

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ, քան՝ այո	3 ավելի շատ այո, քան՝ ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	-----------------------------	-----------------------------	--------------------	-------------------------

10. Ուսանողների գիտելիքները գնահատվել են օբյեկտիվ և անկողմնակալ:

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ, քան՝ այո	3 ավելի շատ այո, քան՝ ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	-----------------------------	-----------------------------	--------------------	-------------------------



11. Դասախոսը ժամանակին էր արձագանքում ուսանողների կարիքներին և խնդիրներին:

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ, քան՝ այո	3 ավելի շատ այո, քան՝ ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	-----------------------------	-----------------------------	--------------------	-------------------------

12. Այս դասընթացին իմ հաճախելիությունը կազմել է \_\_\_\_\_ %:

13. Այս դասընթացի առաջադրանքներին պատրաստվելու համար դասից դուրս շաբաթական ծախսել եմ միջինը \_\_\_\_\_ ժամ:

14. Այս դասընթացի լավագույն հատկանիշներն էին՝

1. \_\_\_\_\_

2. \_\_\_\_\_

15. Այս դասընթացը կարող էր բարելավվել, եթե՝

1. \_\_\_\_\_

2. \_\_\_\_\_

16. Այլ ցանկություններ, առաջարկներ և մեկնաբանություններ՝

1. \_\_\_\_\_

2. \_\_\_\_\_

**Հավելված 5. Ուսումնական գործընթացից ասպիրանտների բավարարվածության վերաբերյալ հարցաթերթ**

**Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան**

**Հարցաթերթ**

**Ասպիրանտների և հայցորդների հարցման**

Հարգելի ասպիրանտներ՝ ը և հայցորդներ՝ ը, խնդրում ենք լրացնել հարցաթերթիկը՝ հետբուհական կրթական ծրագրից Ձեր ակնկալիքները բացահայտելու նպատակով:

Այդպիսով Դուք կնպաստեք հետբուհական կրթական ծրագրերի որակի բարելավմանը:

1. Ծննդյան տարեթիվ՝ \_\_\_\_\_ թ. 2. Սեռ  արական  իգական
  
3. Քաղաքացիություն՝  ՀՀ  ԼՂՀ  Այլ, նշել \_\_\_\_\_
  
4. Մշտական բնակության վայր (քաղաք, մարզ, երկիր) \_\_\_\_\_
  
5. Ո՞ր թվականին եք ավարտել մագիստրատուրան \_\_\_\_\_ թ.:
  
6. Ո՞րն է Ձեր մայրենի լեզուն:  
 Հայերեն  Ռուսերեն  Անգլերեն  Այլ, նշել \_\_\_\_\_
  
7. Սահուն կերպով ի՞նչ օտար լեզուների եք տիրապետում:  
 Ռուսերեն  Անգլերեն  Այլ, նշել \_\_\_\_\_
  
8. Դուք ձևակերպված եք՝  
 Առկա ասպիրանտ  
 Հեռակա ասպիրանտ  
 Հայցորդ
  
9. Դուք աշխատում եք՝  
 Ձեր մասնագիտությամբ  
 Այլ մասնագիտությամբ  
 Հարակից ոլորտում  
 Չեք աշխատում
  
10. Դուք ունե՞ք հրատարակված հոդվածներ: (Նշել հոդվածների թիվը) \_\_\_\_\_  
 Web of Science և Scopus համակարգերում (նշել թիվը) \_\_\_\_\_  
 Միջազգային այլ ամսագրերում (նշել թիվը) \_\_\_\_\_  
 ԲՈՂ-ի կողմից ընդունելի ամսագրերում (նշել թիվը) \_\_\_\_\_  
 Այլ աղբյուրներում (նշել թիվը) \_\_\_\_\_

11. Ո՞րն է Ձեր հետազոտության ոլորտը:

---

12. Ի՞նչ պարբերականությամբ եք խորհրդատվություն ստանում Ձեր գիտական ղեկավարից:

- 1 Հաճախ (շաբաթական մեկ և ավելի անգամ)
- 3 Երբեմն (ամիսը 1 անգամ)
- 4 Շատ հազվադեպ (2,3 ամիսը մեկ անգամ)

13. Արդյո՞ք բավարարված եք Ձեր գիտական ղեկավարի խորհրդատվությամբ:

- 1 Այո՛
- 2 Ո՛չ

14. Եթե ոչ, խնդրում ենք նշել այն միջոցառումները, որոնք կարող էին բարելավել Ձեր համատեղ աշխատանքը:

---



---

15. Ձեր գիտական ղեկավարի հետ համագործակցության ի՞նչ եղանակ կնախընտրեիք:

- 1 Առցանց խորհրդատվություն
- 2 Հատկացված գրասենյակային ժամեր
- 3 Համատեղ հետազոտական-փորձարարական աշխատանքի իրականացում

16. Արդյո՞ք համաձայն եք հետևյալ պնդումներին: Խնդրում ենք 1-4 բալային սանդղակով գնահատել.

		Լիովին բավարարված եմ	Ավելի շատ այո, քան ոչ	Չեմ կարող որոշել	Բավարարված չեմ
1	Մսպիրանտուրայում դասավանդվող առարկայացանկը համապատասխանում է իմ կարիքներին:	(4)	(3)	(2)	(1)
2	Մսպիրանտուրայում դասավանդող դասախոսների մասնագիտական որակները բավարարում են իմ սպասելիքները:	(4)	(3)	(2)	(1)
3	Կրթական ծրագիրը նպաստում է իմ գիտահետազոտական հմտությունների ձեռքբերմանը:	(4)	(3)	(2)	(1)
4	Կրթական ծրագիրը նպաստում է գիտահետազոտական աշխատանքի արդյունքներն արտացոլող փաստաթղթերի (ատենախոսություն, գիտական հոդված) ձևակերպման հմտությունների ձեռքբերմանը:	(4)	(3)	(2)	(1)
5	Կրթական ծրագրի շրջանակներում գործում է գիտահետազոտական աշխատանքի ընթացիկ գնահատման թափանցիկ մեխանիզմ:	(4)	(3)	(2)	(1)
6	Կրթական և հետազոտական ծրագիրը կնպաստի գիտական կարիերայի հետագա զարգացմանը:	(4)	(3)	(2)	(1)
7	Մասնագիտական օտար լեզվի (ստանդարտ տեխնիկական լեզու և ակադեմիական գրագրություն օտար լեզվով) դասընթացները նպաստում են միջազգային գրախոսվող գիտական ամսագրերում հոդվածների տպագրմանը:	(4)	(3)	(2)	(1)

17. Թվարկեք այն դասընթացները, որոնք նպաստում են Ձեր հետազոտության իրականացմանը:

---

---

---

18. Արդյո՞ք բավարարված եք հատկացված լսարանային ժամերի թվաքանակով:

1 այո՝       2 ո՛չ

19. Եթե Ո՛չ, ապա ի՞նչ կառաջարկեիք իրավիճակը բարելավելու համար:

---

---

---

**Հավելված 6. ԲՈՒՀ-ն ավարտողների (շրջանավարտների) հարցման հարցաթերթ**  
**Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան**

**Հարցաթերթ**  
**շրջանավարտների հարցման**

*Հարգելի՛ շրջանավարտ, շնորհակալություն ենք հայտնում այս տարիների համագործակցության համար և ակնկալում ենք, որ այն շարունակական բնույթ կկրի:*

*Խնդրում ենք ներկայացնել Ձեր կարծիքը համալսարանի գործունեության վերաբերյալ:*

**Հարցմանը մասնակցելով՝ Դուք կնպաստեք համալսարանի կրթական և օժանդակ գործընթացների բարելավմանը:**

1. Ծննդյան տարեթիվ՝ \_\_\_\_\_ թ.
2. Սեռ՝  իգական  արական
3. Քաղաքացիություն՝  Հայաստանի Հանրապետություն  Այլ, նշել \_\_\_\_\_
4. Մշտական բնակության վայր (քաղաք, երկիր)՝ \_\_\_\_\_
5. Ո՞ր թվականին եք ընդունվել համալսարան՝ \_\_\_\_\_ թ.
6. Ձեր ուսուցման ձևը՝  Առկա  Հեռակա
7. Ձեր կրթական աստիճանը՝  Բակալավրիատ  Մագիստրատուրա
8. Ձեր մասնագիտությունը՝ \_\_\_\_\_
9. Դուք ընտրել եք Ձեր մասնագիտությունը՝
  - Ծնողների/ընկերների/ծանոթների խորհրդով
  - Սեփական որոշմամբ
  - Այլ, նշել \_\_\_\_\_

**10. Ի՞նչ չափով եք համաձայն հետևյալ պնդումներին.**

հհ	Պնդումներ	Համաձայն եմ	Մասամբ համաձայն եմ	Համաձայն չեմ
1.	Ես լիովին բավարարված եմ համալսարանում իմ կրթական ծրագրով:	(1)	(2)	(3)
2.	Ես գոհ եմ իմ կրթական ծրագրի դասընթացների բովանդակությունից:	(1)	(2)	(3)
3.	Իմ կրթական ծրագիրը ինձ հնարավորություն է տվել դառնալ բարձր որակավորում ու պահանջարկ ունեցող մասնագետ:	(1)	(2)	(3)
4.	Ես ժամանակին լիովին տեղեկացվել էի իմ կրթական ծրագրի նպատակների, պահանջների և վերջնարդյունքների մասին:	(1)	(2)	(3)
5.	Դասախոսների գիտելիքները բավարար էին որակյալ դասավանդման համար:	(1)	(2)	(3)
6.	Դասախոսների և ուսանողների միջև կար արդյունավետ հաղորդակցություն:	(1)	(2)	(3)
7.	Գիտելիքների գնահատումն արդար էր և անկողմնակալ:	(1)	(2)	(3)
8.	Ապագա ուսանողներին ես խորհուրդ կտամ ընտրել իմ մասնագիտությունը/ կրթական ծրագիրը իմ բուհում:	(1)	(2)	(3)
9.	Իմ ուսումնառության ընթացքում բուհն արձանագրել է որակական առաջընթաց կրթության և ծառայությունների բնագավառներում:	(1)	(2)	(3)

**11. Իմ կրթական ծրագիրը կարող էր բարելավվել, եթե.**

- 1 \_\_\_\_\_,
- 2 \_\_\_\_\_

**12. Որքանո՞վ է համալսարանում կրթությունը նպաստել Ձեր՝ հետևյալ կարողությունների զարգացմանը.**

հհ	Կարողություններ	Մեծապես նպաստել է	Մասամբ է նպաստել	Բոլորովին չի նպաստել
1.	Նախագծում	(1)	(2)	(3)
2.	Տվյալների հավաքագրում և վերլուծություն	(1)	(2)	(3)
3.	Համակարգչային ծրագրերի օգտագործում	(1)	(2)	(3)
4.	Նախագծի կառավարում (մենեջմենթ)	(1)	(2)	(3)
5.	Առաջնորդություն	(1)	(2)	(3)
6.	Թիմային աշխատանք և բախումների լուծում	(1)	(2)	(3)
7.	Հաղորդակցություն և հրապարակային ելույթ	(1)	(2)	(3)
8.	Գրավոր շարադրանք	(1)	(2)	(3)
9.	Օտար լեզվով հաղորդակցություն	(1)	(2)	(3)

**13. Խնդրում ենք գնահատել բուհի հետևյալ ծառայությունների որակը.**

հհ	Ծառայություններ	Բավարարված են	Մասամբ բավարարված են	Բավարարված չեն
1.	Լսարանային պայմաններ և սարքավորումներ	(1)	(2)	(3)
2.	Համակարգչային լաբորատորիաներ, համացանց, էլ. փոստ	(1)	(2)	(3)
3.	Կարիերայի կենտրոնի աջակցություն՝ աշխատանք գտնելու գործում	(1)	(2)	(3)
4.	Ֆինանսական աջակցություն, ներառյալ՝ կրթաթոշակներ, զեղչեր	(1)	(2)	(3)
5.	Գրադարան	(1)	(2)	(3)
6.	Հանրակացարան	(1)	(2)	(3)
7.	Բուֆետ, սննդի տրամադրում	(1)	(2)	(3)
8.	Տրանսպորտ	(1)	(2)	(3)
9.	Մեքենայի կայանատեղի	(1)	(2)	(3)
10.	Առողջապահական ծառայություններ	(1)	(2)	(3)
11.	Մշակութային և այլ միջոցառումներ	(1)	(2)	(3)
12.	Ուսանողական մարմին, խորհուրդ, թերթ,	(1)	(2)	(3)
13.	Այլ, նշել	(1)	(2)	(3)

**14. Դուք աշխատում եք և ի՞նչ կարգավիճակով.**

- 1 ունեմ հիմնական աշխատանք՝ լրիվ կամ կես դրույքով
- 2 աշխատում եմ գործարքային հիմունքներով
- 3 չեմ աշխատում

**15. Համալսարանն ավարտելուց հետո ի՞նչ պլաններ ունեք կրթության կամ աշխատանքի առումով.**

- 1 շարունակելու եմ կրթությունս իմ բուհում, իմ մասնագիտությամբ
- 2 շարունակելու եմ կրթությունս այլ ԲՈՒՀ-ում կամ այլ մասնագիտությամբ
- 3 փնտրում եմ նոր աշխատանք՝ միայն իմ մասնագիտությամբ
- 4 փնտրում եմ նոր աշխատանք՝ ոչ միայն իմ մասնագիտությամբ
- 5 աշխատանք չեմ փնտրում

16. Եթե չեք շարունակելու Ձեր կրթությունը, խնդրում ենք նշել պատճառը.

1 Սոցիալական՝ վարձավճարի հետ առնչվող խնդիրներ

2 Կարծում եմ, որ մասնագիտությունս հեռանկարային չէ

3 Կրթությունս շարունակելու հեռանկարներ չեմ տեսնում

4 Այլ, նշել \_\_\_\_\_

17. Ո՞րն է ձեր նախընտրելի ապագա աշխատանքը/ուղրտը՝

---

---

*Շնորհակալություն ենք հայտնում համագործակցության համար և ակնկալում ենք, որ հետագայում Դուք մշտապես կսպ կպահպանեք Ձեր համալսարանի հետ:*